



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԻ. Տարի - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1938 14^{me} Année - Septembre 1938

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ — Աշակերտ	3. Ն. Ղ.
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Երկնային քաղաքացիութիւն	Թրգմ. Ն. Մ.
Զգուշանալիք ծուղակներ	Զ. Բ. Պուտաքեան
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Ոստիկանի մը դարձը — Միլիտանտները Քրիստոսը կը գտնէ — Այդ քան չեմ ուզեր — Մեծ օրհնութիւն մեծ վիշտի մը միջոցաւ — Ուսուցումը որ համբերութիւն կը պահանջէ — Յաւի մէջ բայց տակաւին ուրիշներու մասին կը խորհի	Հաւաքեց՝ Վեր. Ժ. Կ. Պ.
Քրիստոսի ծառայել.	Թրգմ. Վ. Սահակեան
ԵՐԶԱՆԻԿ ՅՈՅՍԸ — Քրիստոսի եկեղեցին եւ անոր ապագան	Վեր. Պ. Ս. Ակիւլեան
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու դէպքեր Հայոց հաւատոյ ընտանիքէն.	Բրոն. Գ. Գ. Խայկեան
ՊԱՏԱՆԵԱՅ — Սամուէլ Մորիս	Թրգմ. Գ. Պարսամեան
ՄԱՆԿԱՆՅ — Վագանձի թղթակցութիւն	
ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ	
ԵՐԳ — Կը պատկանիմ Փրկչին	3. Ն. Ղ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, բնութիւն ճշմարիտ «Բան»ին ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յայտնաւորութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով՝ (կողքէն զատ անոր խմբագրական մարմնին անդամներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ
 Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով: Յօդուածաշարքեր միւնքեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնումով գրուած թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբագրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են առաջուրէն հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ աւելու համար:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
 Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
 ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ: Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
 7, Rue Papère
 MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
 H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

ԲԱՆԲԵՐ

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Ե. 14

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Կանգնուող մահելու խոստումնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գալ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1958

ԹԻԻ 9



Ի՞նչ են հաւատացեալները



ԱՇԱԿԵՐՏ

Դուք իմ աշակերտներս էք:
Յովն. ԺԳ 35

ԱՇԱԿԵՐՏ բառը յաճախ կը գործածուի մեր բե-
րաններուն մէջ: Օրինակ Սողոմոն Նաթանի
աշակերտն էր, Աղէքսանդր Արիստոտէլի, Ներոն
Սենէկայի: Պօղոս առաքեալ կ'ըսէ որ Գամա-
ղիէլի ոտքը մեծցած էր: Այս ցոյց կուտայ թէ
աշակերտ կոչուող անձերը իրենց վարդապետին
քով երկար ժամանակ կեցած և անոնցմէ սոր-
ված են իրենց սկզբունքը, ուղղութիւնը, վերջա-
պէս որպէս այն ի՞նչ որ են, կերտուած են իրենց
ուսուցիչներու կողմէ, անոնց ազդեցութիւնը
կրելով իրենց բոլոր գործունէութեանց վրայ:

Աշակերտ կը կոչենք նաեւ այն անձերը,
որոնք մասնաւոր հակում և համակրութիւն
ունին այսինչ վարպետին, հակառակ որ զանոնք
տեսած ալ չեն, բայց անոնց դպրոցին կը հետե-
ւին, կը ջանան անոնց ուղղութիւնը հիմնովին
սերտել և զայն որդեգրել: Երաժշտութեան, նկար
չութեան, արձանագործութեան, մանկավարժու-
թեան, գրականութեան, փիլիսոփայութեան,
մէջ կան զանազան դպրոցներ, ու մենք կը տես-
նենք որ աշակերտութիւնը, հակառակ որ նոյն
դպրոցին մէջ կ'ուսանին, կ'սկսին բաժնուիլ զա-
նազան դպրոցներու, իրենց նախասիրութեան
համաձայն: Անոնք ուրեմն աւելի համոզուած են
այդ դադափարարանութեան և կը հետեւին
անոր, և իրենց կեանքն ու գործունէութիւնը,
իրենց նախասիրած ուղղութեան կնիքը կը կրէ:
Տէր Յիսուս իր աշակերտներուն, իր վերջի
պատուէրին առթիւ ըսաւ. «Դացէ՛ք, բոլոր
ազգերը աշակերտեցէք»: Այս առումով ալ կը

տեսնենք թէ աշակերտել, համոզել, հաւատացնել
ըսել է և աշակերտը. — համոզուած, հաւատա-
ցած: Ուրեմն Յիսուսի աշակերտները, նախ Անոր
անձին ու էութեանը համոզուած և հաւատացած
են, ինչպէս նաեւ Անոր բերած պատգամին և
ունին առանձնաշնորհն ու պարտականութիւնը
զայն հիմնովին սորվելու և փոխանցելու նաեւ
ուրիշներու:

Հետեւաբար աշակերտ կոչուելու արժանի չէ՛
այն, որ միայն այսինչ փիլիսոփային անունը
կ'առնէ իր վրայ, պէտք է անոր բոլոր դադափա-
րարանութիւնը սորվի և անոր համոզուած ըլլայ:
Նոյնպէս Քրիստոսի աշակերտ է միայն այն, որ
ճանչցած է զԱյն և ամեն օր ջանք կ'ընէ սոր-
վելու զԱյն, համոզուելու անոր պատգամին,
հաւատալու Անոր, եւ նաեւ վարժուելու անոր
մէջ: Յիսուսի աշակերտ ըլլալ ճշմարիտ վարժու-
թեան դպրոց մըն է: Աշակերտները երեքուկէս
տարի Յիսուսի դպրոցին մէջ վարժուեցան Անոր
հետ քալելով:

Պօղոս առաքեալ հակառակ որ համոզուեցաւ
Դամասկոսի ճամբուն վրայ Քրիստոսի Աստուած
ըլլալուն, սակայն Դամասկոսի մէջ Սուրբ Հոգին
ընդունելէ յետոյ դեռ երեքուկէս տարիներ անա-
պատին մէջ սորվեցաւ եւ իր միսիոնարական
գործունէութեան քսանեւհինգերորդ տարիին
կրկին կը գրէ Փիլիպպեցւոց. «Ի՞նչ որ ինձի շահ
էր զանիկա Քրիստոսի համար քննաս սեպեցի եւ
իրաւ բոլոր բաներն ալ քննա կը սեպեմ իմ
Տէրոջս Քրիստոս Յիսուսի գերազանց գիտու-

Թեանը համար... որպէսզի Քրիստոսը շահիմ եւ Անոր մէջ գտնուիմ: Ճանչնալու զԱնիկա, եւ Անոր յարութեանը զօրութիւնը եւ Անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալը»: Քրիստոսի աշակերտ ըլլալ, ուրեմն կը նշանակէ այս բոլորը, որուն հասնիլ կամ անոր մէջ վարժուիլը հաւատացեալին փրկութեան առաջին օրէն կ'սկսի եւ կը շարունակուի մինչեւ անոր վերջին շունչը այս երկրի վրայ՝ շարունակուելու համար տարբեր ձեւով մը յետոյ Փրկչին ներկայութեան: Պօղոս վերի խօսքերը խօսելու ատեն ալ կ'ըսէ թէ ո՛չ թէ ես արդէն կատարեալ եղած եմ, հապա ետեւէ ինկած եմ որ բռնեմ... ետեւէ եղածները մոռցած եմ եւ առջեւի եղածներուն կը դիմեմ: Կ'եզրակացնեմ թէ Քրիստոսի աշակերտ ըլլալ, Պօղոսի ըմբռնութիւն համաձայն ո՛չ միայն համոզուիլ է Քրիստոսի անձին, այլ հաւատալ Անոր, Անոր պատգամին, սկսիլ ճանչնալ զԱյն, Անոր էութեանը բոլորովին գիտակցիլ եւ ինքզինքը Անոր փաստին նուիրել, Անոր մէջ զտնուելով, որպէսզի Քրիստոս հաւատքի միջոցաւ ձեւակերպուի իր մէջ, որպէսզի ինք կարենայ Քրիստոսի ճշմարիտ հայելին ըլլալ, զԱյն իր շինջ պատկերովը ներկայացնելու մարդկութեան: «Անոր մէջ զտնուելու, Անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալու, Անոր մահուանը կ'երպարանքը առնելով»:

Երբեմն կ'արգահատինք այն անձերուն, որոնք կ'ըսեն թէ ապշխարած են, սակայն Քրիստոսի այս պատկերէն բոլորովին հեռու են իրենց կեանքով: Անոնք չեն ուզեր Քրիստոսի աշակերտութեան վերաբերուիլ իրենց վրայէն ձգել, որպէսզի աւելի դիւրաւ կրնան անոր տակ իրենց աշխարհային կեանքն ու շահատակութիւնները շարունակել: 25^օ որ Աստուածպաշտութիւնը ամենամեծ շահավաճութիւնն է: Անոնք Յիսուսի աշակերտ չեն, ապա թէ ոչ զեւերն ալ աշակերտ պիտի կոչուէին: Յիսուսի աշակերտը Անոր նման է, ոչ միայն կեանքով, այլ եւ խօսքով ու գործով ու մահով: Միտք բերենք այն խօսքը զոր Տէրը խօսեցաւ իր աշակերտներուն. «Ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը զոր ես կը գործեմ, ինքն ալ պիտի գործէ եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ...» Յովհ. Ժ. 12: Այս խօսքը հաստատուեցաւ առաքելոց կեանքին վրայ: Գործոց Ե 15, 16ը միտքերնիս բերենք: Պօղոս ալ կ'ըսէ որ բոլոր աշխարհը աւետարանով լեցուց եւ թեատրոնիկեցւոց կ'ըսէ. «Մեր աւետարանը ո՛չ միայն խօսքով եղաւ ձեզի

հապա զօրութիւնով եւ հոգւով Սրբով եւ շատ ազդեցութիւնով»:

Աշակերտութեան երկու պայման կայ.—

ա. Կատարեալ վստահութեամբ մօտենալ, հաւատալ եւ դպրոց մտնել: Եթէ մեր զաւակները իրենց դպրոցներուն մէջ իրենց ուսուցիչներուն հանդէպ թերահաւատ մտքով կենան եւ անոնց բոլոր ըսածներուն փաստ խնդրեն, սորվելու մէջ ետ կը մնան: Իսկ եթէ վստահութիւն ունին իրենց ուսուցիչներու հեղինակութեան վրայ եւ կը սորվին հաւատքով (ցաւալիօրէն նոյնիսկ ճշմարտութեան բոլորովին չհամաձայնող բաներ), որքա՛ն աւելի վստահութիւն ունենալու է Քրիստոսի աշակերտը:

բ. Համբերութեամբ, հաւատարմութեամբ եւ յարատեւութեամբ սորվիլ եւ յառաջդիմել: Աստուծոյ զաւակներ այս կէտին մէջ ընդհանրապէս պակաս կը խորհին եւ յաճախ ալ կը յուսահատին:

Խորհեցէք հեղ մը թէ երիտասարդ մը բժիշկ ըլլալու եւ հիւանդներու վստահութիւնը գրաւելու համար ի՛նչ համբերութեան, ջանքի, աշխատութեան, քնատութեան դիմանալու է, որքա՛ն աւելի Քրիստոսի աշակերտին համար ճշմարիտ ըլլալու է այս:

Երբորդ պայման մըն ալ Տէր Յիսուս ինք կը դնէ իր աշակերտներուն. «Իրարու վրայ սէր ունենալ», զոր պայման կը դնէ որպէս աշակերտ փանջցուելուն: Այս սիրոյ մասին արդէն անցեալ թիւին մէջ խօսած ենք: Եղբայրսերութիւնը նշանն է մէկ Ուսուցչին աշակերտութեան ու նշանախօսը Քրիստոսի աշակերտներուն վկայութեան (կարգալ Յովհ. Ժ. 34, 35):

Վերջապէս ուշադրութեան առնելու ենք նաեւ աշակերտին դիրքը իր վարդապետին հանդէպ.— ճշմարիտ աշակերտը կատարեալ վստահութեամբ միասին, բոլորովին յարգամբ ունի իր վարդապետին հանդէպ: Որովհետեւ զայն կը սիրէ, կը յարգէ ալ: Անոր խօսքերը իրեն խիստ անոյշ կուգան, կ'ընէ ի՛նչ որ ուսուցիչը կ'ըսէ, խնդրի չէ որքան ալ դժուար զայ իրեն, կ'ընէ սիրով եւ նուիրումով: «Խօսքին աշակերտութիւն ընողը իր վարդապետը ամեն բարի բաներու մասնակից կ'ընէ» կ'ըսէ Պօղոս առաքեալ: Անցեալները սիրելի երիտասարդ բժիշկէ մը իր «doctora»ի ճառին մէկ օրինակը ընդունեցի տպագրուած: Երբ զինքը տեսայ, հարցուցի թէ իր բրօֆէսորներէն իւրաքանչիւրին գիտցած էր տարբեր բառերով եւ արտայայտութիւններով պատիւ ընել. բայց ինչո՞ւ առաջին էջը միայն


մէկ բրոֆէսորին յատկացուցած էր և միւս էջերը քանի մը հատին: «Որովհետեւ իմ ընթացքս այդ բրոֆէսորին կը պարտիմ» ըսաւ: Ասոր համար նա մասնաւոր յարգանքի մը առարկայ կ'ընէր զայն հրապարակաւ:

Կը խորհիմ թէ երիտասարդ բժիշկին այս արտայայտութիւնը բաւականաչափ խօսուոյն է որմէ մեր եզրակացութեանց կրնանք հասնիլ: Մեծ մարդիկ, մեծ միտքեր, մեծ քրիստոնեաներ մեր վրայ կ'ազդեն ու պիտի ազդեն, որոնց հանդէպ միայն յարգանք ունինք, սակայն Քրիստոսի աշակերտներս միայն մէկն ունինք, որ բարձարգոյն անձն է և մեր յարգանքին ու պաշտամունքին առարկան, Տէր ցիսուս Քրիստոս:

Անոր խօսքը մեր ոտքերուն ճրագն է և մեր աչքերուն լոյս: Շատ սիրենք Ս. Գիրքը: Անոր

կեանքը մեզի համար զոհուած, Անոր արիւնը մեզի համար թափուած ըլլալով՝ նոր ուխտ մըն է յաւիտենական և յաւիտենականութեան համար, զայն ընդունինք ու այդ ուխտին հաւատարիմ ըլլանք: Անոր հետեւինք, ո՛ւր որ Ան երթայ: Անոր սրբազրել տանք մեր խօսքերը, մեր ձայնի զօրութիւնը, շեշտը, մեր ոճերը, մեր շարադրածը, մեր հագուստը, մեր յարաբերութեանց եղանակը, մեր առուտուրի մեթոտները, մեր բարեգործութեան և միսիոնարութեան, վկայութեան շարժառիթները, մեր նուիրման անկեղծութիւնը, վերջապէս Քրիստոսը թագաւորեցնենք մեր կեանքի բոլոր առընչութիւններուն մէջ: Հոն է մեր աշակերտութեան չափանիշը:


Յ. Ն. Ղ.



ԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԻՒՆ

«Բայց մեր քաղաքականութիւնը երկինքն է»:

ՓԵԼ. Գ. 20



Կրնանք զգալ Առաքեալին սրտին ցնծութիւնը երբ այս վսեմ պարծանքը կը ցատկէ անոր զգայացունց շրթներէն: Մեծ Առաքեալը երբէք պէտք չզգար իր Փրկիչը ջատագովելու: Բնաւ չամչնար իր կրօնքին համար, ոչ ալ քաշուելով իր հաւատքը կը բացատրէ: Երբէք չամչնար Աւետարանին համար: Անոր նկարագրին ցայտուն յատկանիշներէն մին ալ այս է որ սրբազան հպարտութեամբ վեր կը վերցնէ ու կը կրէ իր Փրկիչն ու Անոր Աւետարանը: Նոյնիսկ անոր քալուածքին մէջ կարծես հազուադէպ ու նուիրական վեհութիւն մը կ'երեւնայ: Իրապէս կը հաւատամ թէ եթէ Պօղոս Առաքեալ մեր առջեւէն քալէր, անոր քալուածքին մէջ անպատճառ պիտի նշմարէինք մեծ հոգիի մը հետ ունեցած կապակցութիւնը: Այո, ինծի կը թուի թէ անոր քալուածքն իսկ նշանակելի էր: Կ'ըսեն թէ այն անձնաւորութիւնները որ բարձրաբերձ ու ընդարձակ մայր եկեղեցիներու մէջ պաշտօն կը վարեն, բնազդաբար կ'ստանան վեհ երեւոյթ մը ու քալուածք մը, որ զիրենք նման կ'ընէ այն հոյակապ շէնքերուն: Ուրեմն նաև այն անհատները, որոնց կոչումը զանոնք քրիստոնէական ազա-

տութեան շքեղ անցքերէն ու փրկարար շնորհքին անսահման կամարին տակէն կ'առաջնորդէ, անտարակոյս կը ստանան այնպիսի ազնուական շարժ ու կաց մը, որ ապացոյցն է իրենց Յաւիտենական Աստուծոյն սրդիներն ըլլալուն: Հոովմայեցի քաղաքացիին իր վեհ ու գիտակից քալուածքով կը զանազանուէր հասարակ ամբոխէն ու զերիէն: Արդ իմ բաղձանքս է որ ամէն մէկ հոգի որ Տէր Յիսուս Քրիստոսը կը դաւանի, նուիրական, ազնուատոհմ հպարտութեամբ մը և շարժ ու կացի ուրոյն վեհութեամբ մը որոշապէս ցուցնէ աշխարհին թէ երկնային քաղաքացի մըն է: Ամէն անգամ որ Առաքեալը կը պարծենայ, «Տէրոջմով» կը պարծենայ:

Նուիրական պարծանքով կը պարծենայ հոս այն թագաւորութեան վրայ, որուն մէջ իբրեւ ազատ քաղաքացի ծնած է: Մեր քաղաքականութիւնը (իմա քաղաքացիութիւնը) երկինքն է: Երկինքի թագաւորութիւնը իր հայրենիքը կը նկատէր և կը ցնծար այն հաւատքով թէ իր անունը արձանագրուած էր այն օրհնեալ տէրութեան ազատ բնակիչներուն ցանկին մէջ: Հնազանդ էր այն տէրութեան օրէնքներուն: Մարդ-

կային աղմուկներուն մէջէն «Քրիստոսով Աստուծոյ բարձրագոյն կոչումին» կ'ունկնդրէր: Ամբոխին ձայնէն չէր տարուեր: Տէրոջը մեղմ ու բարակ ձայնը աւելի յստակ կը հնչէր իր ականջին: Մեծ, սպիտակ գահէն կ'ընդունէր իր հրա մանները: Կը վախնար մարդկային պատուէրներէ որ փոխուելու ու ծոռելու են թակայ են: Մեր նաւերէն շատերը երկու կողմնացոյց ունին, որոնցմէ մին աւելի բարձր դիրքի մը վրայ հաստատուած է: Ասոր պատճառը այն է որ անոնք կը ճամբորդեն այնպիսի ջուրերէ, որոնց մէջ արտակարգ, մագնիսական հոսանքներ գոյութիւն ունին, որոնք կողմնացոյցին ճշգրտութիւնը խանգարելով, անոր հետեւիլը վտանգաւոր կը դարձնեն, քանզի մարդիկ կը խաբուին անոր ցոյց տուած ուղղութիւնէն: Ուստի նաւորդը կը հետեւի այն կողմնացոյցին, որ վտանգաւոր յորձանքներէն շատ վեր հաստատուած է ու կը հասնի իր փափաքած նաւահանգիստը: Պողոսի քաղաքացիութիւնը երկինքն էր: Երկինքէն առաջնորդութիւն կը փնտռէր՝ մերժելով աշխարհի խոտոր ընթացքը: Անիկա երկինքի բաները կը մտածէր:

Պողոս Առաքեալ կը վայելէր նաեւ երկինքի առանձնաշնորհումները: Իր քաղաքացիութիւնը միմիայն ծանր պարտականութիւններ չէր դնէր իր վրան, այլ նաեւ վսեմ արտօնութիւններ կ'ընծայէր իրեն: Նոր Երուսաղէմի ազատ բնակիչն ըլլալ իրական ազատութիւն էր: Ազատ էր օրէնքի սարսափէն, ազատ չթողուած մեղքի մութ ու պինդ կապանքէն, ազատ չնչին հրամաններու դառն լուծէն, ազատ մահուան ու դատաստանի երկիւղէն, որ մարդը անդամալոյծ կ'ընէր: Տէրոջը ազատ հպատակն ըլլալ կը նշանակէր ստրուկ գերութիւնը թօթափելով Երկնային Հօր Որդին ըլլալ ու Աստուծոյ զաւակներուն փառաւոր ազատութիւնը վայելել:

Անիկա ուրախ էր որ Երկնի թագաւորութեան պաշտպանութիւնն ունէր: Անգլիական կառավարութեան հպատակ մը աշխարհի որ անկիւնն ալ որ գտնուելու ըլլայ, իր կառավարութեան պաշտպանութիւնը կը վայելէ: Ամենէն ազքատ ու աննշան Անգլիացի իսկ կրնայ իր հայրենիքին ցամաքային ու ծովային ոյժերուն դիմել, երբ աշխարհի որ եւ մէկ մասին մէջ հակառակութեան կ'ենթարկուի: Երբ Հիւսիսային ծովուն եզերքը ափ մը խոնարհ անգլիական ձկնորսներուն հետ չարաչար վարուեցան, Բրիտանիոյ Միացեալ թագաւորութիւնը պատերազմի ազդակներ բարձրացուց: Նոյնը ճշմարիտ է նաեւ այն

թագաւորութեան համար, որուն Կենաց Գիրքին մէջ Առաքեալին անունը արձանագրուած էր: Անիկա կը վայելէր իր պատկանած տէրութեան հրաշալի պաշտպանութեան խոստումները: «Միթէ Տէրը իր ընտրեալներուն վրէժը պիտի չըլուծէ»: «Ո՞վ է որ քեզի պիտի ֆրասէ»: Երկնային քաղաքացին երբէք առանձին, անմխիթար ու անկարող չթողուիր: Անտեսանելի դաշնակիցներ մեզ կը շրջապատեն: «Լեռը հրեղէն ձիերով ու կառքերով լեցուն էր»: «Ուրեմն եթէ վրաս գորքի բանակ ելլէ, սիրտս պիտի չվախնայ, եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլայ, անով ալ ես վստահ պիտի ըլլամ»:

«Ուրկէ ալ Փրկչին կ'սպասենք, Տէր Յիսուս Քրիստոսի»: Առաքեալը արդէն մեծ բաներ ունէր, սակայն աւելի մեծ բաներ կ'ակնկալէր: Իր Երկնային հայրենիքին զանձերէն բաժին կ'ընդունէր, բայց օր մը անոր դուռը բացուելով Պողոս պիտի դիմաւորէր իր թագաւորը: Սիրոյ նուէրները անբացատրելիօրէն շնորհալի են, սակայն որքան կը նսեմանան զանոնք նուիրող սիրոյն առջեւ: Պողոսի ամենաբոլոր ակնկալութիւնը կեդրոնացած էր իր Տէրը դէմ առ դէմ տեսնելու մէջ: Կը հսկէր ու կ'սպասէր. իր աչքերը լարուած էին Անոր յայտնուիլը տեսնելու: Անտարակոյս առանց վարանելու կարող էր երգել: «Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ, երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ուղեր»: Այս անձնուէր Առաքեալին համար երկինքը Յիսուս, և Յիսուս՝ երկինք կը նշանակէր:

«Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու»: Այն փառաւոր դիմաւորումը իրականանալէ առաջ յարմար զգեստներ ձեռք ձգելու ենք: Մեր ներկայ մարմինը մեր ճամբորդութեան զգեստն է: Անոր փառաւոր յայտնութեան առթիւ մեր ճամբորդութեան հազուատները հանելով հարսանեկան զգեստներ պիտի հագնինք: Հարսանեկան զգեստներու համար մտահոգուելու պէտք չունինք: Տէրը պիտի նայի այդ գործին: Անիկա պիտի չթողու որ վախնանք ու օտար զգանք մեզ Իրեն նման պիտի ընէ: «Իր փառաւոր մարմինին կերպարանակից» պիտի ըլլանք: Այսպէս Անոր տունը պիտի մտնենք ու հոն բուրգովն ընտանի զգանք: «Երբ արթննամ, քու դէմքէդ պիտի կշտանամ»:

«Այն զօրութիւնովը որ կարող է ամէնը իրեն տակ հնազանդեցնելու»: Այս է Առաքեալին յոյսը և ոչ միայն անորինը՝ այլ ամենուս յոյսը: Անիկա

կարող է: Ան կրնայ անապատը վարդի պէս ծաղկեցնել: Ան կրնայ բորոտին մարմինը փոքրիկ մանուկի մը մարմինին նման ընել: Կրնայ Մարիամ Մազդադեանացին աչքառու սրբուհիի մը վերածել ու ինծի արդարութեան պատմութեան հազցնել: Այո, պիտի դիմաւորեմ զԱյն ու Իրեն հետ բնակիմ:

Թարգմ. Ն. Մ.

ԶԳՈՒՇԱՆԱԼԻՔ ԾՈՒՂԱԿՆԵՐ (*)

Ա. Տիմթ. Դ. 11—16

...Աւետարանիչին զգուշանալիք ծուղակները կրնան երկու դասի բաժնուիլ: Նախ այնպիսիներ, որոնցմէ Աւետարանիչը ազատ ըլլալու է անձամբ, վասնզի ի՞նչ պիտի պատահէր եթէ որսի չսկսած «ձկնորսը» ինք արդէն բաժնուած ըլլար...: Ապա այնպիսիներ, որոնցմէ զգուշանալու է որպէսզի պարապ տեղը աշխատած չըլլայ: Առանց կենալու մասնաւոր բնաբանի մը վրայ, ներշնչուինք սակայն վերոյիշեալ համարներէն:

* *

Ա. Հոգ տար քու անծիր.—

Աւետարանիչը մէկն է որ Աստուծմէ կանչուած է Բրիտանոսի դեսպանը ըլլալու: Նա այս բանին համար կանչուած, ընտրուած և օծուած է մասնաւոր պարգևներով և շնորհներով, հմր. 14:

Նա պարտի զրադիլ մի միայն իր կոչումով: Աւետարանիչը իր սրտին մէջ ունենալու է միակ դրդապատճառ մը. Աստուծոյ սէրը: Ունենալու է մէկ տեսիլք մը. կորսուած մարդկութիւնը: Վերջապէս հետապնդելու է միակ նպատակակէտ

(*) Յունիս 28 — Յունիս 2 Nogentի Աստուածաբանական ճեմարանին մէջ տեղի ունեցան տարեվերջի ժողովներ, Վեր. Dr. R. Sailleusի նախագահութեան տակ: Յունիս 1ը յատկացուած էր միայն հովիւներու, Աւետարանիչներու եւ նախնի աշակերտաց: Կէս օրէն վերջ երկու ժամ յատկացուեցաւ անդրադառնալու «Հոգեւոր գործունէութեան ծուղակներուն»: Աստուծոյ խօսքին շուրջ խիստ օգտակար պահ մ'էր որ վայելեցինք, մատնանշելով եւ զիբար զգուշացնելով Հոգեւոր գործաւորին սպառնացող վտանգներու մասին: Այս առթիւ էր որ առիթը ունեցայ ներկայացնել վերոյիշեալ նիւթը, իբր հիմ ծառայելու գաղափարի փոխանակութեանց, զոր այս առթիւ կը փափաքեմ Բանքերի Ընտանիքին հաղորդելու զանոնք ալ քչիկ մը Nogentի Հոգեւոր միջնոցը տին տեղեւոյ պահելու նպատակաւ:

Զ. Բ. Պ.

մը Աստուծոյ Թագաւորութիւնը: Եթէ Աւետարանիչը թոյլ տայ փորձուիլ կողմնակի զբաղումով մը — ծուղակը ինկած է: Այս պատճառաւ է որ այսօր կան երեսփոխան պատուելիներ, գորգավաճառ և աճէնթ քարոզիչներ եւն: Չենք խօսիր բացառութիւններու մասին, մեր խօսքն է յաւէտ անոնց մասին, որք կը կարծեն դիւրաւ միասին լծել էշն ու եզը, որք կը խորհին երկու ճամբաներով յառաջացնել իրենց կոչումն ու սպասաւորութիւնը: Մենք պարտինք շատ բաներով հետաքրքրուիլ և ունենալ բազմակողմանի հրմտութիւն, և մեր գործը առատ ասպարէզ կը ներկայացնէ մեզի զարգանալու շատ ուղղութիւններով, սակայն կրկին հարկ է մեզի երբեք «անհոգ չըլլալ մեր վրայ եղած պարգեւին վրայով»:

Հոգեւոր գործաւորը յիշելու է որ ինք Աստուծոյ գործիքն է: Տէրը զայն կը զրկէ Իր կողմէն, իր գործին համար և նա կը հաշուէ Իր գերիշխանութեան վրայ, կատարելու համար Իր գործը: «Ասէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի եւ երկրի մէջ, ՈՒՐԵՄՆ գացէք...»: Գացէք Աւետարանելու վասնզի ԵՍ գերիշխան եմ: Աւետարանիչ մը կրնայ տաղանդի տէր ըլլալ եւ կը մաղթէի որ բոլոր հոգեւոր գործաւորները ուժեղ տաղանդի տէր ըլլային: Այս բանը միշտ կարելի չէ, բայց մեզի միշտ կարելի է, եւ կարելի ըլլալու է շնորհքի տէր մարդիկ ըլլալու: Մէկը որուն գործութիւնը Տէրն է: Աւետարանիչ մը վստահելու չէ իր անձնական ուժերուն: Այս բանը շատոնց գիտենք, սակայն երբեք բաւական չենք սորվիր, թէեւ գոց գիտենք Զաք. Դ. 6ը: Այս տեղ սակայն կարեւոր ծուղակ մը կայ: Ծուղակ մը վտանգաւոր, զի հոն իյնողը նորէն ամեն ազատութիւն ունի գործելու, յոգնելու, զոհելու, զոհուելու, սակայն ո՛չ յաղթելու եւ արտադրելու, զի անզօր է, իր «մարմինին» վրայ ունեցած վստահութեան պատճառաւ:

Բարեբաղդաբար Աստուած յանձն կ'տոնէ զմեզ ազատել այս որոգայթէն ի մասնաւորի գործածելով մեր սպասաւորութեան փորձութիւններն ու դժուարութիւնները: Ծիշող այստեղ կայ ուրիշ ծուղակ մը, գանգատիլ կամ յուսահատիլ, դառնանալ կամ ապստամբիլ: Զգո՛յ՜ ըլլանք: Աստուած, մեր սպասաւորութեան տառապանքներովը զմեզ ցնցելու վրայ է, որպէսզի թափթիփն «շարժուելիք բաները», որ մենք ազատ ըլլանք մեր ուժերէն, և Աստուած ըլլայ նոյն ինքն մեր կեանքը:

Բ. Հոգ տար քու գործիդ.—

Հովիւը կամ Աւետարանիչը հօտին գլուխն է: Իր պաշտօնը զինքը, տեղական եկեղեցիին գլխաւոր գործաւորը կը դարձնէ: Պարտի կազմակերպել, որոշել եւ ուղղութիւն տալ: Միշտ խորհուրդ կը հարցուի իրեն եւն: Անշուշտ հարկ է որ մէկը վստահութիւն ունենայ ինքն իր վրայ, ունենայ հեղինակութիւն եւ կշիռ, հարկ է որ ինքզինքը բաւարար սեպէ շատ բանի, սակայն զգոյշ:

Մենք բնաւ ջանալու չենք մենք մեզի ընել բոլոր գործը: Նախ անկարելի, ապա սխալ է: Տէրն ալ իր կողմէն մեր վերեւ եւ մեր շուրջ դրած է թանկագին օժանդակներ որք կը մոռցուին յաճախ: Նախ կայ Ս. Հոգին: Կ'աղաչեմ ամեն տեղ մի ըլլաք ամեն ինչ եւ մի ջանաք ընել ամեն ինչ: Վստահութիւն ունեցէք Սուրբ Հոգւոյն վրայ, պտղաբերելու ձեր ջանքերը: Ըլլայ հոգիներ շահելու մէջ, ըլլայ հոգիները մեծցնելու գործին մէջ հաշուեցէք Անոր գործակցութեան վրայ: Հիանալի է Ան, եթէ միայն յօժարինք մեր ձեռքերը քիչ մը ետ քաշել, և թոյլ տալ որ Ան ալ բան մը ընէ այսինքն բուն գործը: Եթէ մենք, լման ըմբռնենք թէ Ս. Հոգին որքան գերիշխան է եկեղեցիին և Աշխարհի մէջ, որքան սիրալոյս տար քեզմնաւորելու մեր ճիգերը, և որքան անձկալից որ մենք «մնայուն պտուղ» բերենք, շատ բան պիտի փոխենք մեր գործելու մեթոտներէն:

Ապա կայ եկեղեցին: Հաշուեցէք անոր վրայ ալ: Ս. Հոգւոյն զանազան պարզեւները տրուած չեն մէկ անհատի (հովիւի կամ եկեղեցւոյ անդամի) այլ բոլոր եկեղեցիին: Ժողովուրդին մէջ յաճախ կան հաւատացեալներ որոնք տաղանդաւոր, նուիրուած և հոգեւոր զօրութեան տէր են: Զգոյշ եղէք դուք զձեզ մինակ կարծելու ծուղակին մէջ անդամաւորութիւն: Գործի լծեցէք ձեր եղբայրները: Գիտցէք զանոնք գործածել իրենց կարողութեան ծայրագոյն չափովը: Զգոյշ միջաւորուած եսի մը կամ նախանձի ծուղակներէն և ձեր գործը մեծապէս պիտի զարգանայ, զի ամեն մէկ կենդանի քրիստոնեայ «լարուած ծուղակի» մը պէս է:

Յիշելու ենք նաեւ ուսուցման ծուղակները: «Հոգ տար քու վարդապետութեանդ»: Շատ չպնդեմ այս կէտին վրայ քանի որ հոս բոլորս «լիակատար ներշնչման» պատուական դպրոցին մէջ սնած ենք: Բայց կ'ուզէի աւելի պնդել ճամարանիս նշանաբանին վրայ: «Լման Քրիստոսը, բոլոր Ս. Գրքին մէջ»:

Մեզի հարկ է բոլոր Ս. Գիրքը քարոզել: Սակայն մենք փորձութիւնը ունինք մասնակի Աւետարան մը քարոզելու: Երբեմն կ'առնենք վարդապետական մասը և երբեմն բարոյականը: Նկատած եմ որ տիեզերական եկեղեցին ալ, իր շեշտը կը դնէ մերթ վարդապետութեան և մերթ պարտականութեան վրայ: Սակայն առաքեալը կը պատուիրէ «սորվեցնել և յորդորել», այսպէսով կը կապէ երկուքը: Հարկ է մեզի քարոզել բովանդակ յայտնութիւնը, լոյսերու իր յարաճուն երանգներով: Եթէ միայն ծանրանանք մեզի ծանօթ և հաճելի նիւթերու վրայ շուտով կը չորնանք: Իսկ մեր ունկընդիրները կը պատկանին բազմազան դասակարգերու և ունին զարմանազան դժուարութիւններ: Անոնց ներկայացնելով միակողմանի և միաձայն պատգամ մը չենք հասնիր անոնց, իրենց այն կարօտութեանց մէջ, ուր ինկած ի գուր մեր օգնութեան կ'սպասեն: Հուսկ յետոյ կը յոգնին, կը հեղաշնան և կ'ուժանան եկեղեցիէն: Զգոյշ, միօրինակ պատգամ մը վարդապետօրէն դարձնելով կրկին և կրկին հրամցնելէ: Զգոյշ ծուլութեան ծուղակէն: Լաւ և խորունկ մտածենք: Եւ ժամանակ տանք «կարդալու» ինչպէս կը պատուիրէ մեր հմուտ առաքեալը:

* *

Այս բոլորը սակայն շատ բանի պիտի չծառայէր, եթէ մենք չենք սորված զգուշանալ կեղծ հոգեւորութեան մը հին ծուղակէն: Քանի՜ քարոզիչներ Ազատութիւն կ'աւետեն, մինչ իրենք նոյն պահուն բռնուած են անարդ որոգայթի մը կապերէն:

Ահա թէ ինչո՞ւ առաքեալը մեզի կը պատուիրէ անարգելք չըլլալ, այլ մեր կոչումն ու պատգամը հաստատել մեր վարքովը, մեր սիրովն, հաւատքով և մաքրութեամբը: Եւ այսպէս ընելով մենք ազատ պիտի ըլլայինք մեռած ուղղափառութեան և կեղծ հոգեւորութեան կրկնակի ծուղակներէն:

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ, Յուլիս 1938

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Միշտ լաւ է չըսել այնքան, որքան որ կրնայինք ըսել:



Մարդոց ցուցումածէն աւելին գիտնալ, աւելին ըլլալ եւ աւելին կրնալ, Յիսուսի ցոյց տուած մեթոտն է:



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ

ԿԵՆ ԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՈՍՏԻԿԱՆԻ ՄԸ ԴԱՐՁԸ

«Ես զԱստուած կրնամ պաշտել ո եւ է ատեն և ո եւ է տեղ» ըսաւ Լիվերբուրցի հսկայ ոստիկան մը, «Տէրունական օրը սուրբ պահելու ընկերութեան» տեղւոյն միսիոնարին իրեն այցելութեանը առթիւ: «Ես իմ Ս. Գիրքս տունը կրնամ կարգալ, եկեղեցի երթալու պէտք չունիմ»: «Այո՛» ըսաւ այցելուն, «Հարցումը սա է թէ Դուք ձեր Ս. Գիրքը տունը կը կա՞րգաք»: Մարդը խոստովանեցաւ որ չկարգար: Միսիոնարը շարունակեց, «Երկրորդ հարցումը այս է թէ Սուրբ Գիրք մը ունի՞ք կարգալու»: «Հոս զիս բռնեցիք» ըսաւ ոստիկանը «Կը վախնամ թէ Ս. Գիրք մը չունիմ»:

«Այն ատեն Սուրբ Գիրքը տունը կարգալու խօսքը ընելինդ ո եւ է օգուտ մը չունի, գալ կիրակի Տէրոջը տունը գացէք»:

Նա 17 տարի է ի վեր ոստիկան մ'էր և կիրակիները ազատ: Այդ կիրակի նա եկեղեցի եկաւ և դարձի եկաւ և սոյն եկեղեցիին մէջ ամենալաւ գործողներէն մին եղաւ:



ՄԻԼԻՈՆԱՏԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԸ ԿԸ ԳՏՆԷ

Իրենց վիշտերուն միջոցաւ կարգ մը Հրեաներ Աստուծոյ կը դառնան եւ Անոր Որդին Յիսուս Քրիստոսը կ'ընդունին իբր իրենց Փրկիչը ու Մեսիան: Անցեալ տարի Անգլիոյ մէջ Հրեայ միլիոնատէր մը մկրտուեցաւ: Այդ պարագային անոր այտերէն ուրախութեան արցունքներ կը հոսէին: Նա Գերմանիոյ մէջ շատ մը գործարաններ և հազարաւոր գործաւորներ ունեցած էր, մեծ հարստութիւն և զեղխութիւն: Այդ երկրին մէջ Հրեաներուն դէմ եղած հալածանքէն յետոյ նա փախչելով հազիւ իր կեանքը ազատած էր վասն զի առնուազն տասը տարուայ համար «Կեղրոնացման Բէմփին» մէջ մնալու պիտի դատապարտուէր: Գաղթական մը, մերկացած ալդ բոլորէն, որ իրեն համար վստահելի նկատած էր, «Ներքին միսիոնարութեան» պաշտօնեանե-

րէն միոյն քովը գնաց, Աւետարանը լսեց ու զայն ընդունեց: Երբ Քրիստոսի մէջ իր ունեցած հաւատքին վկայութիւնը կուտար, ըսաւ. «Եթէ երբեք նորէն դրամ ունենամ, զայն Աւետարանին քարոզութեանը համար պիտի գործածեմ»:

«Սակայն դիտենք որ ամեն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն» Հռով. Ը 28:



ԱՅԴՔԱՆ ՉԵՄ ՈՒՉԵՐ

Հարուստ տիկինի մը դիմում եղաւ որպէսզի եկեղեցիի մը շինութեան համար նուէր մը տայ: Նա պատասխանեց «Ուրախութեամբ կուտամ, բայց ինչ որ պիտի տամ որբեւարիին լուման պիտի ըլլայ»: Դիմողը ըսաւ, «Ո՛չ, ես այդքան չեմ ուզեր, այդ շատ պիտի ըլլայ»: «Բայց դուք զիս սխալ հասկցաք, ես ըսի թէ միայն որբեւարիին լուման պիտի տամ, այսինքն քիչ բան մը»: Դիմողին պատասխանը սա էր, «Ես իմ խօսքիս վրայ կը կենամ, ես այդքան շատ ընդունիլ չեմ ուզեր, ինչու որ այն որբեւարին որ դուք կը յիշէք, իր բոլոր ունեցածը, իր ապրուստին բոլորը տուաւ»:

«Ան որ խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձէ, ու ան որ առատութիւնով կը սերմանէ՝ առատութիւնով պիտի հնձէ»: Բ. Կորն. Թ 6:



ՄԵՍ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՄԵՍ ՎԻՇՏԻ ՄԸ ՄԻՋՈՑԱԻ

«Կանըր Միսիոն» Փուրիլիաի մէջ ի Պէնկալա բորոտներու մէջ մեծ և օրհնեալ գործ մը ունի: Միսիոնար Ուֆման 1901ին վախճանած՝ այս բորոտներու գործը սկսաւ 1888ին: Կ'արժէ գիտնալ թէ նա ի՞նչպէս առաջնորդուեցաւ այս գործը սկսելու: Մեծ վիշտի մը միջոցաւ: Նա շատոնց ի վեր այս դժբաղդ բորոտներուն համար տեղ մը կարգադրելու մասին կը խորհէր, բայց դեռ չէր համարձակեր, այդ միջոցին իր մեծ աղջիկը ուսանելու համար Գերմանիա գացած ըլլալով, հոն բորոտութեան հիւանդութենէն բռնուեցաւ և հակառակ բժշկական ամեն խնամքի, մեռաւ: Այս դէպքը, վշտաբեկ հայրը առաջնորդեց բորոտներու գործին: Նա անմիջապէս քանի մը խրճիթներ շինելով մի քանի հիւանդներ ընդունեց և ապա հաստատուն շէնքեր կառուցանեց աւելի հիւանդներ ընդունելու համար: Վերջապէս 600 բորոտ-

ներէ բաղկացեալ զիւր մը մէջտեղ բերաւ: Հոս որքա՛ն ցաւ և վիշտ կայ, այս հիւանդներուն ամեն օր որչա՛փ խնամք պէտք էր: Բայց միեւնոյն ատեն հիմնադիրը նկատեց թէ հիւանդներուն մէջ մեծ երախտագիտութեան հոգի մը և Աստուծոյ խօսքին հանդէպ բաց սիրտեր կան: Միսիրոնար Ուֆման իր ունեցած վիշտին պատճառաւ, այսպէս բորոտներու հայրը եղաւ և մարդոցմէ արտաքսուած հարիւրաւոր բորոտներու խաղաղութիւն, յոյս և օրհնութիւն բերելու միջոց մը դարձաւ:



ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ՈՐ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ

Բորոտներու մէջ աշխատող մէկը այսպէս կ'ըսէ, «Երբ բորոտներու հիւանդանոց գալը տեսնես, զարմանքի մէջ կը մնաս թէ Աւետարանին ճշմարտութիւնները, այս յուսահատ և կենդանիներէն քիչ մը աւելի վեր սեպուած մարդոց ի՞նչպէս հասկցնելու ես: Սակայն երբ անոնց կը խօսիս և սորվեցնելու կ'աշխատիս, այն ատեն Ս. Հոգիին զարմանալի գործակցութեան փորձառաբար վերահասու կ'ըլլաս: Կէս օրէ վերջ մը, ժամու մը Հափ նստայ բորոտներու նոր խմբակի մը ցորենի և որոմի առակը սորվեցնելու: Երբոր վերջացուցի, հարցուցի, «Ո՞վ էր թշնամին», «Յիսուս» ըսաւ պզտիկ կին մը կարծ ոճով մը որ սիրտս խոցեց: Այսուամենայնիւ տասը ամսուայ ընթացքին նա ամենափայլուն քրիստոնեաներէն մին եղաւ և յետոյ այս թշուառ աշխարհէն անցաւ զնաց զԱստուած օրհնելով իրեն հանդէպ ցոյց տուած ողորմութեանը համար:

«Տէրոջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ, Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է և օգէտը իմաստուն կ'ընէ»: Սաղ. ԺԺ. 7:



ՅԱԻԻ ՄԷՋ ԲԱՅՑ ՏԱԿԱԻՆ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԿԸ ԽՈՐՀԻ

«Բուանտա Միշըն»էն Միս Բ. Մ. Լէնկլի բորոտներու միսիրոնին ժողովին մէջ հետեւեալը պատմեց.

«Կղզւոյն մէջ ուր մեր բորոտներու հիւանդանոցը կը գտնուի, գտայ մէկը որ ձեռքի և բազուկի ցաւէն խիստ կը տառապէր: Չայն քննեցի և ձեռքին ոսկորներուն մէջ կտոր մը

գտայ ու ըսի թէ զայն պիտի հանեմ: «Եթէ կը հաճիք, ոչ այսօր» ըսաւ մարդը: «Բայց մինչեւ որ զայն ընեմ շատ պիտի տառապիք» ըսի անոր և զարմացայ թէ մինչեւ յաջորդ օրը սպասել ուզեց: Այն ատեն իմացայ թէ նա կղզիէն երկիրը պիտի անցնէր, հոն ժողովուրդին Աւետարանը քարոզելու և գիտէր թէ հոն 44 մարդիկ իրեն պիտի սպասէին որպէսզի գար և իրենց սորվեցնէր: Նա նախընտրեց տառապիլ այդքան ժամեր մինչեւ յաջորդ օրը, քան թէ յուսախաբ ընել այն փնտոցները»:

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅԵԼ

ցովհ. ԺԲ 26

Քրիստոսի ծառայել ամենէն մեծ և ամենէն փառաւոր ծառայութիւնն է: Մարդիկ քաղաքական և կառավարական շրջանակներու մէջ աթոռներ և դիրքեր զբաւելու համար իրարու հետ կը մրցին: Անոնք սովորաբար մեծ խոստումներ կ'ընեն ըսելով թէ՝ ժողովուրդին այսպէս կամ այնպէս պիտի ծառայեն. բայց յաճախ այս խոստումները միջոցներ են միայն ժողովուրդին քուէն շահելու և կամ իրենց ցանկացած աթոռն ու դիրքը զբաւելու: Անոնք կ'ուզեն իրենց կուսակիցներուն ծառայել դիրքի հասնելէ յետոյ միայն:

Մարդիկ մեծ պատիւ մը կը համարեն իրենց երկրին ծառայել պատերազմի ժամանակ: Զինուորը ազգային մեծ հերոս մը կը նկատուի և իր բոլոր քաղաքակիցներուն յարգանքին տիրացած է: Հասարակական կեանքի մէջ ծառայութեան բազմաթիւ դաշտեր կան, և մարդիկ մեծ առանձնաշնորհում մը ու պատիւ կը սեպեն երբ կարողութիւն ունին ծառայելու այս կամ այն աստիճանով, նոյնիսկ եթէ այդ ըլլայ իբր նստիկան կամ հրշէջ: Հայրենիքին և ժողովուրդին ծառայութիւնը կրնայ մեծ և պատուարժէք ըլլալ՝ բայց Քրիստոսի ծառայել ամենամեծ և ամենէն պատուարժէք ծառայութիւնն է:

Այս ծառայութիւնը բաց է ամէն անոնց, որոնք կը յօժարին Քրիստոսի ետեւէն երթալ, և ասիկա Յիսուսի դրած պայմանն է, «Եթէ մէկը ինծի կը ծառայէ, թող իմ ետեւէն գայ»: Քրիստոսի ետեւէն երթալ կը նշանակէ Անոր գացած ճամբուն մէջ Անոր հետեւիլ: Անոր ոտքի քայ-

լերուն ձգած հետքերուն մէջ դնել մեր ոտքերը, և Անոր կտրած ճամբան կտրել մինչեւ վերջին քայլը: Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ իր անձը ուրանալ և իր անձնական կեանքը կորսնցնել: Քրիստոս իր կեանքը չսիրեց, իր անձին հաճոյ չեղաւ, հապա զայն զոհեց օրէ օր իր Հօրը կամքին և ի վերջոյ խաչին մահուանը: Այսպէս ալ մենք պարտինք մեր կեանքերը զոհել Քրիստոսի կամքին և իր ետեւէն երթալ՝ եթէ կ'ուզենք Անոր ծառայել: Մեր կեանքերը սիրելու ոչ մէկ փորձ պարտինք ընել, հապա յօժարելու ենք զայն կորսնցնել:

Ասիկա, անշուշտ կոչ է աշակերտութեան և ոչ թէ փրկութեան: Շատ որոշ տարբերութիւն մը կայ փրկութեան և աշակերտութեան միջեւ: Մէկը որ դեռ չէ փրկուած՝ չկրնար Քրիստոսի աշակերտ մը ըլլալ: Փրկուիլ ըսել է՝ Տէր Յիսուս Քրիստոսի հաւատալով, մինչդեռ աշակերտ ըլլալ կը նշանակէ Քրիստոսի հետեւիլ: Միայն անոնք որ փրկուած են, կանչուած են նաեւ աշակերտներ ըլլալու: Եւ փրկուածներուն ամէնն ալ ասոր կանչուած են: Քրիստոսի աշակերտութեան եւ ծառայութեան ասպարէզը բաց է բոլոր անոնց, որոնք Քրիստոսի կը հաւատան և փրկուած են: Մեր համարը կը խօսի Քրիստոսի ծառայութեան և ասոր վարձքին վրայ:

Ա. Ի՞նչ է Քրիստոսի ծառայութեան հանգաւանքը.—

Մեր Տէրը կողմէ անհուն շնորհք մըն է կորսուածները փրկել և յետոյ զանոնք իր օրհնեալ ծառայութեանը կանչել: Ս. Գիրքը մեզի կը ներկայացնէ մեծ բազմութիւններ, որոնք Տէրը ծառայութեան կանչուեցան, և որոնց Տէրը ծառաներու տիտղոսը տուաւ զանոնք «Իմ ծառաներս» և «Աստուծոյ ծառաները» կոչելով:

1. Յայտնի է թէ մարդս բնականէն՝ Քրիստոսի ծառայութենէն օտարացած է: Ս. Գիրքը կը ներկայացնէ բնական մարդը մեղքին, զանազան ցանկութիւններու և հեշտութիւններու ծառայող. Հոով. 2 16, 17, 20, Տիմ. Գ 3: Մեղաւորը մեղքի գերութեան մէջ, մեղքի ծառայ ըլլալով՝ բոլորովին անկամ է Քրիստոսի ծառայելու: Բնական մարդը Աստուծոյ թշնամին է, և բոլորովին հակառակ Աստուծոյ օրէնքին և կամքին: Հոով. Ե 10, Կող. Ա 21, Հոով. Ը 7:

2. Բոլոր անոնք որ Քրիստոսի ծառայութեան կ'արձանագրուին, նախ Աստուածային փոփոխութեան կ'ենթարկուին: Սուրբ Հոգին կը ներգործէ անոնց մէջ Աւետարանին պատգամով եւ

զանոնք կուռքերէն Աստուծոյ կը դարձնէ՝ Քրիստոսի ծառաներ ըլլալու. Ա. Թեա. Ա 5, 9, 10: Ապաշխարութեան և Աստուծոյ հետ հաշտուելու գործը Քրիստոսի ծառայութեան գործէն առաջ կուգայ...:

Մեղաւոր մը չկրնար Տէրը ծառայել:

3. Քրիստոսի ծառայութիւնը պէտք է Քրիստոսի կամքովը ծրագրուի եւ կառավարուի: «Եթէ մէկը ինծի կը ծառայէ, թող եմ ետեւէս գայ»: Ան որ կ'ուզէ Քրիստոսի ծառայել, պէտք է Աստուծոյ խօսքին հաւատայ, և այդ խօսքին մէջ յայտնուած Տէրը կամքին գլուխ ծռէ: Ուրիշ խօսքով, Քրիստոսի ծառայել ուզողը պէտք է Անոր «Տէր» ըլլալը սրտի ճշմարիտ իրականութեամբ հաստատէ. Դուկ. 2 46: Ան որ կ'ուզէ Քրիստոսի ծառայել, պէտք է Անոր առաջնորդած ճամբան երթայ և Անոր պատուիրած շաւիղէն քալէ: Այս կէտին մէջ չկայ բան մը որ մեր անձնական քմահաճոյքին և ընտրողութեան ձգուած ըլլայ: Քրիստոսի հպատակիլ եւ Անոր խօսքին հնազանդիլ՝ Քրիստոսի ծառայութեան մէջ կենսական անհրաժեշտութիւնը ունի:

4. Քրիստոսի ծառայութիւնը մեր տաղանդներուն եւ մեր ամբողջ ունեցածին Անոր ուրախութեամբ տակ զոհաբերուելը կը պահանջէ: Տէրը կ'ուզէ որ մենք մեր անձերը իրեն ընծայենք, և մեր մարմինները ընծայենք կենդանի զոհ մը. Հոով. 2 13, ԺԲ 1: Մեր պարգեւները և տաղանդները ընծայուելու և հաւատարմօրէն գործածուելու են Քրիստոսի ծառայութեան. Հոով. ԺԲ 6-8: Մեր ժամանակը, կարողութիւնները, մեր հեղինակութիւնն ու զրամը Քրիստոսի ծառայութեան ընծայուելու են, որպէսզի Աւետարանը հեռու և ընդարձակ տեղեր քարոզուի, հոգիներ փրկուին, Աստուծոյ զաւակները հաւատքի մէջ հաստատուին, Անոր ծառայութեան պատրաստուին եւ Տէրը գործը երկրի վրայ յառաջանայ: Քրիստոսի ծառայութիւնը ոչ միայն մեր ունեցածին ամբողջը կը պահանջէ, հապա մեր ունեցածին նախ ծառայութիւն մը կատարելապէս արժանի են մեր ունեցածին ամբողջին տիրանալու:

5. Քրիստոսի ծառայութիւնը անհրաժեշտօրէն սէրէ կը բղխի, սէր մեր Աստուածային Տիրոջ: Սէրը՝ Քրիստոսի ծառայութեան մէջ ճշմարիտ մղիչ գորութիւնն է և ստիպող ուժը. «վասնզի Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ». Բ. Կոր. Ե 14: Առանց սիրոյ, որ և է ուրախ, օգտակար և ընդունելի ծառայութիւն չկրնար ըլլալ: Եւ մեր սիրոյն փաստը ասով տուած կ'ըլլանք, որ մեր անձերը

Տէրոջը կ'ընծայենք, Իր խօսքին կը հնազանդինք եւ մեր ամբողջ ունեցածը Իր ծառայութեան կը զոհենք: Տէրոջը գործին վրայ միայն խօսիլ եւ բերնի յօժարութիւն ունիչ կ'արժէ եւ Անոր ոչինչ կը շահեցնէ: Մարդ մը կրնայ քրիստոնէութեան վարդապետութեանց վրայ շատ ընդարձակ գիտութիւն ունենալ, առանց սակայն Քրիստոսի վրայ սէր ունենալու: Մարդ մը կրնայ շատ բարձրաձայն դաւանիլ եւ շատ մեծադորդ եկեղեցական գործունէութիւններ ունենալ, առանց սակայն Քրիստոսի վրայ սէր ունենալու: Կեանքի մէջ Աստուածային սէրը Սուրբ Հոգիին պտուղն է, և այս սէրը միայն այն քրիստոնեային ստացուածքը կը դառնայ որ ինքզինքը բոլորովին ընծայած է Սուրբ Հոգիին և Անով լեցուած: Միայն երբ Քրիստոսի սէրը մեզ կը զրաւէ, մեզի կը տիրանայ եւ մեզ կը ստիպէ, ճշմարտապէս կրնանք ծառայել Քրիստոսի:

6. Քրիստոսի սէրը ժրջանութիւն եւ հաւատարմութիւն կը պահանջէ: Պէտք է ծառայել յօժարակամ, ուրախութեամբ, ջերմեռանդութեամբ եւ հաւատարմօրէն: Վարանիլ, դանդաղիլ, ժամավաճառ ըլլալ, անփոյթ եւ անհոգ ըլլալ, խառնակ եւ կասկածելի միջոցներ գործածել Քրիստոսի ծառայութեան մէջ, մեր ծախողիլը կը նշանակէ: Մենք պէտք է հոգիով բորբոքինք եւ մինչեւ ի մահ հաւատարիմ ըլլանք:

Բ. Ի՞նչ է Քրիստոսի ծառայութեան վարձատրութիւնը:

Քրիստոսի ծառայելով աշխարհի պատիւը պիտի չկրնանք ձեռք ձգել՝ հապա ընդհակառակը անոր դժգոհութեան, ծուռ ու խոժոռ նայուածքին, յօնքերու պոստումին, կնճիռներուն և անշուշտ նաեւ ատելութեան ու հալածանքին միայն պիտի արժանանանք. Յովհ. ԺԵ 19, Բ. Տիմ. Գ 12: Աշխարհի մարդիկ, որոնք հռչակի ու պատիւի ետեւէն կը վազեն, աշխարհի կողմէ կը պատուընդունին. «աշխարհ իրենները կը սիրէ», իսկ Քրիստոսի ծառաները աշխարհէ ուրացուած եւ մոռցուած են: Բայց Աստուած զանոնք չմոռնար. Եբր. 2 10:

1. Տէրը ինք իր ճշմարիտ ծառաները հոս այս աշխարհի մէջ կը պատուէ: Նա կը գործածէ զանոնք իբր միջոցներ և գործիքներ Իր գիրծը և Իր փառքը յառաջ տանելու: Տէրը Իր ծառաներուն ջանքերը յաջողութեամբ կը պսակէ հոգիներու փրկուելով եւ սուրբերուն օրհնութեամբ: Մեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջ-

մով. Ա. Կոր. ԺԵ 58: Ի՞նչ մեծ պատիւ է Տէրոջը կողմէ գործածուիլ հոգիներու փրկութեան եւ Աստուծոյ ժողովուրդին օրհնութեան համար: Այսպիսի ծառայութեան մը լոյսին տակ աշխարհային ամէն ծառայութիւն ցած եւ անկարեւոր կը մնայ: Տէրոջմով սիրելիներ, սիրտ առէք:

2. Տէրոջը ծառաները պիտի պատուընդունին յաւիտենականութեան մէջ: Անոնք Տէրոջը կողմէ պիտի պատուընդունին երբ այս աշխարհի ամբողջ պատիւները ոչնչացած պիտի ըլլան: Աստուծոյ օրհնութեամբ անոնք զուր տեղը ապրած եւ ծառայած պիտի չըլլան: Անոնք Տէր Յիսուսի հետ պիտի ըլլան եւ Հայրը պիտի պատուէ զանոնք: Անոնք պիտի պատուընդունին երբ Քրիստոսի ատեանին առջեւ վարձատրուին. Բ. Կոր. Ե 10: Անոնք գործերէն յետոյ պիտի հանգչին, ամօթէ յետոյ փառք պիտի ստանան, պատերազմէ յետոյ խաղաղութիւն, ցաւէ եւ տրտմութենէ ետք ուրախութիւն, վիշտէ եւ տապնապէ ետք հրճուանք ու բերկրութիւն, ասպարէզի ընթացքը վազելէ եւ յաղթանակները տանելէ ու բոլոր պատերազմները վերջացնելէ յետոյ փառաց պսակ: Ո՞վ կրնայ երեւակայել երկնային այն տեսարանը, ուր ասոնք Յիսուսի առջին պիտի կայնին եւ Հայր Աստուած Ինքը պիտի փառաւորէ զանոնք: Իրաւցրնէ ինչպէս գրուած է, «այն բաները գործնք աչք չէ տեսեր եւ ազանջ չէ լսեր, ու որոնք մարդու սրտին մէջ չեն ինկեր, Աստուած զինք սիրողներուն պատրաստեց». Ա. Կոր. Բ 9:

Դուն մեղքի՞ ծառայ մըն ես թէ Քրիստոսի ծառայ մը: (*)


Թրգմ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ



Փափկանկատ ըլլանք զմեզ շրջապատող հոգիներու հետ: Զգոյշ ըլլանք ինքզինքնիս անհրաժեշտ սեպելէ անոնց համար, եւ զանոնք արտաքին կամ ներքին կապերով չկապենք մեր անձին, հապա զանոնք յարաբերութեան զննք կենաց Ակին հետ եւ գոհ մնանք, երբ Հոգին զմեզ անոնցմէ կը վերցնէ, ինչպէս փիլիպպոսը առաւ Եփովլացի ներքիններէն:

(*) Սոյն յօդուածը կարդացուեցաւ Մարտի 11-ի եկեղեցիին մէջ Յունիս 10-ին Մամուլէ եղբայր Պապուկեանի միսիոնարական ուղջերթի հանդէսին առթիւ:



մեծ ճարտարապետը հազար ինը հարիւր տարի-
ներէ ի վեր շինելու վրայ է այս շէնքը, և ան-
պատճառ օր մը զայն կատարելութեան պիտի
հասցնէ, երբ վերջին քարը վրան դրուի:

Այս շէնքը՝ Քրիստոսի եկեղեցին «Աստուծոյ
բնակարան» կոչուած է, Եփ. Բ 22. Կրնա՞ն երե-
ւակայել քեզի համար ասկէ աւելի մեծ վիճակ
մը:

Եկեղեցին «Քրիստոսի մարմինը» կոչուած է,
Եփ. Բ 22, 23: Երբ Աստուած առաջին Ադամը
ստեղծեց, ըսաւ, «Աղէկ չէ որ Ադամ միակ
ըլլայ, անոր օգնականն մը ընեմ իրեն յարմար
եւ...» Տէր Աստուած խորունկ քուն մը բերաւ
Ադամի վրայ ու անիկա քնացաւ, և անոր կողին
ոսկորներէն մէկը առաւ ու անոր տեղը միս
լեցուց, և Տէր Աստուած Ադամէ առած կողին
ոսկորը կին շինեց ու զանիկա Ադամի բերաւ և
Ադամ ըսաւ, հիմա ասիկա ոսկորէս ոսկոր ու
մարմինէս մարմին է, ասիկա կին կոչուի, քանզի
իր այրէն առնուեցաւ: Անոր համար այրը պիտի
ձգէ իր հայրը ու իր մայրը և իր կնոջ պիտի
յարի ու մէկ մարմին պիտի ըլլան. Ծննդ. Բ
18, 21, 23, 24: Նմանապէս երկրորդ մարդը, վեր-
ջին Ադամ երբ խաչին վրայ մեռաւ, աչքերը
գոցեց. «Զինուորներէն մէկը գեղարդով անոր
կողը խոցեց և շուտ մը արիւն և ջուր ելաւ».
Յով. ԺԺ 34:

Քրիստոսի եկեղեցիին անդամ ըլլալու միակ
պայմանը Անոր կողէն ելած արեան աղբիւրէն
լուացուիլն է:

Խաչին վրայ խեղճ աւազակն,
Երբ այն աղբիւրն տեսաւ,
Չարչարանացը ժամանակ,
Խիստ շատ ուրախացաւ:

Այն փրկարար աղբիւրն տեսայ,
Եւ տեսնելէս ի վեր,
Իմ գովութեանս առարկայ,
Եղաւ Քու սէրդ ով Տէր:

Քրիստոսի եկեղեցին երկնային է: Չեմ ըսեր
թէ՛ երբ երկինք երթալ այն ատեն երկնային
պիտի ըլլայ, հապա ան երկնային է հիմա,
այսինքն երբ դեռ աշխարհի վրայ կ'ապրի:

1. Ան երկնային է, որովհետեւ վերէն՝ Սուրբ
Հոգիէն ծնած է. Յով. Գ 3, 7:

2. Ան երկնային է, որովհետեւ Յիսուս անոր
մասին վկայութիւն տուաւ ըսելով, «Անոնք աշ-
խարհէ չեն, ինչպէս ես աշխարհէ չեմ». Յով.
ԺԷ 16:

Եկեղեցի բառը Յունարէն Ekklesia բառէն
առնուած ըլլալով կը նշանակէ մասնաւոր նպա-
տակի մը համար գատուած ժողովուրդ մը: Ինչ-
պէս Քրիստոսի եկեղեցին ալ Աստուծոյ կողմէն
և Անոր գորութիւնովը և Իր շնորհքին ճշմու-
թիւնովը մասնաւոր նպատակի մը համար, այս
ներկայ չար աշխարհէն դուրս կանչուած ժողո-
վուրդ մըն է:

Որո՞նք կրնան անդամ ըլլալ այս եկեղեցիին:
«Եւ Տէրը օրէ օր փրկուածները կ'աւելցնէր եկե-
ղեցին» Գործք. Բ 47. չփրկուած, նորէն չծնած-
ները եկեղեցիի անդամ առնել Սուրբ Գրային չէ
և մեծ վնասներ յառաջ կը բերէ: Փայլուն տեղե-
կագիրներ տալ և եկեղեցին նիւթապէս հարստա-
ցնելու և քարոզիչին ալ ճոխ ամսական մը տա-
լու նպատակաւ, անդարձ անդամներ շատցնել,
հոգիները խաբել, զանոնք իրենց մեղքերուն
մէջ հաստատել և դժոխք առաջնորդել ըսել է:
Երբ Փիլիպպոս ներքինիին Տէր Յիսուսի վրայով
կը խօսէր, ջուրի մը հանդիպեցան. ներքինին
ըսաւ, «Ահա ջուր, ալ ի՞նչ բան դիս կ'արգիլէ
մկրտուելէ»: Փիլիպպոս աճապարանքով և առանց
գիտակցութեան տակ մկրտութիւն մը ընել չու-
ղեց, ներքինիին միայն արտաքին արտայայ-
տութիւնները և փափաքը բաւական չսեպեց,
հապա Քրիստոսեայ մը ըլլալու քայլին մէջ
ամենէն կարեւոր կէտը հարցուց ըսելով, «Եթէ
քու բոլոր սրտովդ կը հաւատաս, կարելի է». Գործք. Ը 36-37: Քրիստոսի եկեղեցիին անդամ-
ները կոչուած են, «Աստուծոյ ընտանիքը, առաք-
եալներուն ու մարգարէներուն հիման վրայ շին-
ուած, որուն անկիւնին գլուխը Յիսուս Քրիստոս
է, որով բոլոր շէնքը մէկտեղ յարմարութեամբ
կազմուած կ'աճի, սուրբ տաճար մը կ'ըլլայ Տէ-
րոջմով» Եփ. Բ. 19-21:

Հազար ինը հարիւր տարիներ առաջ, Սուրբ
Հոգին սկսաւ այս շէնքը շինելու: Ինչպէս որ
շէնք մը դեռ չշինուած ճարտարապետին մտքին
մէջ արդէն շինուած է, և թուղթի մը վրայ ալ
գծուած, բայց վերջին քարը դրուելով կատարե-
լութեան կը հասնի, նոյնպէս Սուրբ Հոգին, այն

3. Ան երկնային է, որովհետեւ անոր քաղաքականութիւնը երկինքն է. Փիլ. Գ 20:

4. Ան երկնային է, որովհետեւ ան Քրիստոսի հետ յարութիւն առած և երկնաւորներուն մէջ նստած է. Եփ. Բ 6:

Երբ Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Քրիստոսի կողմանէ ղեսպանութիւն կ'ընենք», ասով կը հասկնանք թէ Պօղոս և բոլոր Աստուծոյ զաւակները երկնային կառավարութեան կողմէն աշխարհ ղրկուածներ են, որ իրր ղեսպաններ և երկնային կառավարութեան ներկայացուցիչներ իրենց թագաւորէն պատգամ առած, աշխինքն Քրիստոսի փրկարար Աւետարանը, ներկայացնեն այս կորսուած աշխարհին:

Օտարական մ'եմ ես պանդուխտ երկրի մը մէջ, իմ տունս է շատ հեռուն, գեղուն լուսով անշէջ, Դեսպան մ'ըլլալ ղրկուած, Սուրբ երկրէն վեհապանծ,

Հրամանափն թագաւորին:

Այս է բերած պատգամս վերին,
Հրեշտակք կ'անձկան այս պաշտօնին,
Ոհշուտ հաշտուեցէք, կ'ըսէ զօրաց Աստուած,
Ոհ, շուտ իր հետ հաշտուեցէք:

Քրիստոսի եկեղեցին հազար ինը հարիւր տարիներէ ի վեր, աշխարհէ հալածուած, սատանային վայրագ յարձակումներուն նշանակէտ եղած է. անոր անդամները անհատապէս և խմբովին, առիւծներէն գիշատուեցան, ցիցերու վրայ մոմի պէս այրուեցան, գլխատուեցան և ուրիշ հազար ու մէկ անտանելի չարչարանքներու ենթակայ ըլլալով նահատակուեցան, բայց ան մինչեւ այսօր յաղթութենէ յաղթութիւն հասնելով հաստատ մնացած է: Յիսուս Քրիստոս ինքը, որ եկեղեցիին ղրկուած է, անոր մասին ըսած է՝ «Դժոխքին դռները զանիկա պիտի չյաղթին»։ Մաթ. ԺԶ 18: Հոս «Դժոխք» բառը չունի այն տեղին իմաստը, ուր ամբարիշտ և անհաւատները վերջին դատաստանէն յետոյ հոն պիտի նետուին, որ կոչուած է «գեհեն»։ Մաթ. Ժ 28, ԺԸ 9, ԻԳ 13, 33 և այլն, որ նաեւ կոչուած է «ծծումբով վառած կրակին լիճը»։ Յայտ. ԺԹ 20, բայց վերոյիշեալ «դժոխք» բառը «հատէս» (Hades) բառէն թարգմանուած է և իմաստը ունի այն տեղին, ուր ներկայիս անապաշխար մարդոց հոգիները կը գտնուին, որուն դռներն են մահը և գերեզմանը. ուրեմն երբ մեր Տէրը կ'ըսէ, «Դժոխքին դռները զանիկա (իր եկեղեցին) պիտի չյաղթեն», ըսել կ'ուզէ թէ՝

Ա. Հաւատացեալի մը հոգին, վարը, Հատէսը պիտի չերթայ. բաղդատէ, Բ. Կորն. Ե 8, Փիլ. Ա 23:

Բ. Հաւատացեալի մը մարմինը գերեզմանին մէջ պիտի չմնայ, բաղդատէ, Եփ. Դ 30, Ա. Թես. Դ 15-17:

Տէր Յիսուս իր մահովը և յարութիւնովը մահուան և Հատէսին յաղթած է, հիմա ինքն ունի անոնց բանալիները. Յայտ. Ա 18: Այս գիտակցութիւնն էր որ Քրիստոսի եկեղեցիին անդամներէն շատեր Անոր անուան համար նահատակուիլը ռւրախութեամբ դիմաւորեցին, ասոր համար է որ իրական հաւատացեալ մը ալլեւս մահէն և գերեզմանէն չվախնար:

Քրիստոսի եկեղեցին քարեղէն շէնք մը չէ: Նոր Կտակարանի մէջ չկայ այնպիսի վարդապետութիւն մը և կամ զաղափար մը, որոն համաձայն շէնք մը եկեղեցի կրնայ կոչուիլ, նոյն ատեն շատ ցաւալի է որ այսօր քրիստոնէական աշխարհը այս կէտին մէջ ալ Սուրբ Գիրքին լոյսէն շեղած ըլլալով «եկեղեցի» բառը յատկացուած է շէնքերու, փառաւոր շէնքերու և այս կերպով ալ սատանան մոռնալ տուած է ամենէն կարեւորը և գրեթէ պաշտել կուտայ դուրսի կեղեւը: Քրիստոսի եկեղեցին ճշմարիտ հաւատացեալներէ բաղկացեալ խումբն է: Անոնց հաւաքուած տեղերը կրնան կոչուիլ ժողովատեղի: Եթէ «եկեղեցի» անուան շէնք մը վայելէր, ան ալ կը վայելէր Պէնտէկոստէի օրը Սուրբ Հոգիով լեցուած հարիւր քսան աշակերտներուն տանը: Ասոնք այլեւս ներկայ տաճարին ծիսական օրէնքներով և պաշտամունքներով չէին կրնար շարունակել. վարագոյրը արդէն վերէն վար պատռած էր, նոյն օրը Հին Կտակարանը, Հին Ուխտը և հին տնտեսութիւնը վերջացաւ և նոր տնտեսութիւնը՝ Քրիստոսի եկեղեցին սկսելու վրայ էր որ սկսաւ Պէնտէկոստէի օրը երբ Սուրբ Հոգիին գալովը հարիւր քսան աշակերտները Քրիստոսի մարմինին մկրտուեցան. Ա. Կոր. ԺԲ 13: Ասոնց ժողովները կ'ըլլար տուներու մէջ: Մարկոսին մօրը Մարիամին տունը այս տուններէն մին էր. Գործք. ԺԲ 12:

Սա յայտնի ըլլայ, և արդէն ալ յայտնի է թէ ուր որ և որչափ որ «եկեղեցի» անունով փառաւոր շէնքերու ետեւէ իյնալ կայ, հոն հոգեւորապէս անկում ալ կայ: Երեմիայի օրերը ժողովուրդին հոգեւորապէս ինկած վիճակի մը մէջ ըլլալը կը տեսնենք հետեւեալ բառերուն մէջ. «Երուսաղէմի փողոցներուն մէջ պտըտեցէք, ու հիմա

նայեցէք ու գիտցէք, ու անոր հրապարակներուն մէջ փնտռեցէք, և եթէ մարդ մը կրնաք գտնել, եթէ իրաւունք ընող, ճշմարտութիւն փնտռող մը կայ, ևս այն քաղաքին թողութիւն ընեմ»։ Եր. Ե 4։ Եւ տես որ նոյն ժողովուրդը ինչ պարծանք ունի Սողոմոնի շինած այդ փառաւոր տաճարին վրայ, ըսելով «Տէրոջը տաճարը, Տէրոջը տաճարը, Տէրոջը տաճարը ասոնք են»։ Եր. Ե 4։ Սրտով Տէրոջմէն բոլորովին խոտորած, նոյն ատեն կը պարծենային տաճարով, որ շատ չանցած այրեցաւ և իրենք ալ սուրէ անցան, գերի տարուեցան։

(Շար.)

Վեր. Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՅ ՀԱՌԱՏՈՅ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ (353-373)

ՆԵՐՍԷՍԻ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ.— Կեսարիայէ Հայաստան վերադառնալէ յետոյ՝ նախ եղաւ իր մօրեղբոր Արշակ Թազաւորի (351—368), սենեկապետը և կը բռնէր անոր փառաւոր սուրը պաշտօնական օրերուն։ Հաւանաբար կը վարէր նաեւ արքունի հազարապետի պաշտօնը եւ կը մատակարարէր Թազաւորին գանձը. քանզի իրեն համար ըստած է, «բոլոր գանձին վրայ էր»։ Բարձրահասակ, գեղեցկագէտ ու գանգրահեր երիտասարդը, — որ տէր էր նաեւ մտային ու բարոյական նախանձելի ձիրքերու, կարող էր հետզհետէ բարձրանալ և մեծ դեր մը կատարել քաղաքական ասպարէզի մէջ։ Բայց տարբեր էր Աստուծոյ ծրագիրը անոր համար։

Յուսկի յաջորդ Փառէն կաթողիկոս վախճանած էր և արժանաւոր մէկը կը փնտռուէր հայրապետական թափուր աթոռին համար։ Մէկէն ամենուն աչքերը յառեցան Ներսէսի վրայ։ Իբր միակ շառաւիղը Լուսաւորչեան տոհմի եւ իբր երկիրդած, մարդասէր եւ զգաստ քրիստոնեայ՝ զրաւած էր նա միահամուռ համակրանքը թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական դասուն։ Բայց Ներսէս կ'ընդդիմանար։ Ոչ թէ քաղաքական կեանքի փայլէն հրապուրուած,

հապա ինքզինքը անարժան ու անկարող նկատելով հովուապետական նուիրական կոչմանը։ Արշակ Թազաւոր ճարահատ՝ եկեղեցական եւ աշխարհական աւագանին ժողովի հրաւիրեց։ Հոն կէս մը համոզեցին և կէս մըն ալ ստիպեցին Ներսէսը՝ համակերպելու ժողովուրդի փափաքին։ Նոյն ժողովին մէջն իսկ կտրեցին անոր գանգուր մագերէ, մերկացուցին զայն պալատականի փառաւոր զգեստներէն ու զարդերէն և անոր հագցուցին կղերականի սքեմը։ «Սրտաշարժ էր տեսարանը, ամենքը կը փղձկէին, շատերը կ'արտասուէին ալ, բայց ներքին ուրախութիւն մը կը զգային թէ այս կերպով պիտի նորոգուի Հայոց աշխարհի պայծառ վարքը» (Օրմանեան)։

Ներսէս նախ սարկաւագ ձեռնադրուեցաւ. բայց շուտով և յաջորդաբար ստացաւ նաեւ եկեղեցականի աւելի բարձր աստիճանները և վերջապէս բազմեցաւ հայրապետական աթոռին վրայ (353)։

ՆԵՐՍԷՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ.— Փոքր մարդիկ մեծ գործի մը մէջ կը նետուին անխորհրդաբար, յանդգնութեամբ ու աշխուժով։ Բայց նոյնիսկ առաջին դժուարութիւններուն առջեւ կը յուսալքուին ու ետ կը քաշուին։ Ասոնց հակառակ մեծ մարդիկ գործի մէջ մտնելէ առաջ կը տատամսին ու կը վախնան, քանզի լըջօրէն կը կշռեն իրենց առջեւ պարզուած ասպարէզին դժուարութիւնները և ինքզինքնին անկարող կը գտնեն՝ անոնց յաղթելու։ Սակայն գործի մէջ անգամ մը նետուելէ ետք, այլեւս չեն ընկրկիր, որքան մեծ խոչընդոտներու ալ հանդիպին։ Այդպէս էր Մովսէս։ Որչափ ընդդիմացաւ Աստուծոյ՝ Անոր կոչին համակերպելէ առաջ։ Բայց մէյ մը Եգիպտոս երթալէ ետք՝ կատարեց իր ծանր պարտականութիւնը Աստուծոյ ապաւինելով մինչեւ իր կեանքի վախճանը, առանց աջ ու ձախ խոտորելու, նոյնպէս ըրաւ նաեւ մեր Ներսէսը։ Երկար տատամսումներէ ետքը և մեծ երկիւղով էր որ նա իր ձեռքն առաւ հովուապետական ցուպը։ Բայց զայն ընդունելէ ետք հովուեց իր հօտը իմաստութեամբ, քաջութեամբ և սքանչելի յաջողութեամբ։

Ինչպէս տեսանք նախորդ յօդուածին մէջ՝ իր բարձրագոյն ուսման շրջանին 3—4 տարի Կեսարիա գտնուեցաւ։ Ետքն ալ իբր Արշակի առաջին սենեկապետը անոր գործերով այցելեց Բիւզանդիոն։ Այդ երկու կարեւոր կեդրոններուն մէջ ծանօթացած էր յոյն եկեղեցւոյ նշանաւոր

հայրերուն բարեկարգչական ծրագիրներուն ու ձեռնարկներուն: Ուստի ջանաց հայաստանի մէջ մտցնել այն «բարեկարգութիւնը, զոր տեսած էր Յունաց աշխարհին, մանաւանդ մայրաքաղաքին մէջ» (Խորենացի): Կաթողիկոսական աթոռը բարձրանալէ հազիւ մէկ տարի ետք Տարոնի Աշտիշատին մէջ համազգային ժողով գումարեց, ուր ներկայ էին բազմաթիւ եպիսկոպոսներ եւ նշանաւոր դերքի տէր աշխարհականներ: Հոն անոնց համամտութիւնն ու գործակցութիւնը ապահովեց և ապա սկսաւ իր կազմակերպչական ու բարեկարգչական գործին: Իր առաջին գործերէն մին եղաւ.—

ԹԵՄԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՉՄՈՒԹԻՒՆԸ. — Լուսաւորիչ 400 եպիսկոպոսական թեմեր հաստատած էր. բայց տարիներու ընթացքին անոնցմէ շատեր կամ բոլորովին զրկուած էին իրենց եպիսկոպոսներէն և կամ անարժաններու ձեռքն անցած: Ներսէս վերակազմեց այդ թեմերը և ըստ կարելոյն անոնց վրայ արժանաւոր եպիսկոպոսներ դրաւ: Ասով նա ապահովեց լուրջ գործակիցներու խումբ մը, որոնց օգնութեամբ կրցաւ մեծ բարեփոխութիւններ մտցնել երկրին մէջ: Գոնէ մի քանի հատը յիշենք:

Արգիլեց մերձաւոր ազգականներու մէկմէկու հետ ամուսնանալը, որ տեղի կ'ունենար ազահութեան պատճառաւ նախարարական տոհմերու մէջ: Ոմանք կ'ամուսնանային նոյնիսկ իրենց որդւոց որբեւարի կիներուն հետ՝ իրենց ստացուածքը չկորսնցնելու համար: Արգիլեց նաեւ այն հեթանոսական սովորութիւնը, որմէ մտրակուած մարդիկ կը յօշոտէին ու կ'արիւնտէին իրենց երեսները ազգականներու յուղարկաւորութեան ատեն:

Մասնաւոր կանոններով «կը հրամայէր ամուսնական հաւատարմութիւնը... և կը պատուիրէր ամենուն, որոնք իրենց ընկերոջ վրայ իշխանութիւն ունէին» գերիներու և ծառաներու, աշակերտներու և կրտսերներու հետ գթով ու չափաւորութեամբ վարուիլ և վերջացնել հին սովորութիւնը, որով իշխաններ եւ տէրեր, ու ուսուցիչներ ու ծնողներ բռնական վարմունք ունէին իրենց ստորադասեալներու վրայ» (1):

Աննպաստ ո՛չ մէկ բան խօսէ ուրիշի մը հիանդէպ, երբ քեզ խօսեցնողը չեն պարտականութիւնը, Ֆշմարտութիւնը եւ սէրը:

(1) Օրմանեան, Ազգապատկոյմ, էջ 174:



ՊԱՏԱՆԵԱՅ
ՍՍՄՈՒԷԼ
ՄՈՐԻՍ
ՓՈՔՐ ՍԵՒԱՄՈՐԹԸ

Դ.

Mr. Readի վերջին տեղեկագիրը.— Տօնի օր մը, երբ ճաշի նստած էինք, մեզի բերին խորոված աւանդական հնդկահաւ մը. ես ըսի իրեն, «Սամուէլ, ո՞ր երկիրը լաւ է, մե՞րը թէ ձերը»: Պարոն Րիտ, պատասխանեց անմիջապէս, «Ի՞նչ բաղդատութիւն պիտի ըլլայ այստեղի խորոված հնդկահաւի մը և հոնտեղի հում կապիկի մը մէջ»: — «Ինչո՞ւ ինծի այդպէս կ'ըսես, անշուշտ յաճախ դուք կապիկ չէք ուտեր»: — Ո՛հ, անշուշտ, ես շատ անգամ կապիկ կերած եմ, եւ հում հում կերած եմ զանոնք: Սակայն և այնպէս, սորվելու իր մեծ հետաքրքրութիւնը Ամերիկայի մէջ, զինք աւելի պահեց հոս իր դպրոցական ուսումը աւարտելու, այնպէս որ չկրցաւ պէտք եղածին պէս շուտ վերադառնալ իրեննեւրուն քով, անոնց Աւետարանին բարի լուրը տանելու համար: «Երբ վերադառնամ իմ երկիրս կ'ըսէր ինք, բոլորովին պիտի նուիրուիմ ցեղիս մանուկներուն: Պիտի հաւաքեմ զանոնք շուրջս աւագին վրայ և պիտի խօսիմ անոնց Յիսուսի մասին և անշուշտ անոնցմէ ոմանք պիտի առանձնանան մացառներու մէջ, իրենց մեղքերուն վրայ տառապելու և հեծկլտալու համար, յետոյ պիտի վերադառնան ինծի սրտի ուրախութեամբ և ներքին կատարեալ խաղաղութեամբ, աւետելու թէ օրհնեալ Փրկիչը գտած են: Տէրովը շնորհքովը, ես այս ծառայութիւնը անշուշտ պիտի ընեմ անոնց»:

«Իր պատգամները յաճախ խիստ թելադրական էին. անգամ մը խօսելու ատեն այսպէս կ'ըսէր. «Հացը բան մըն է, քարն ալ ուրիշ բան, ես անգամ մը քար մը տեսայ, որ իր մէջը ուրիշ լեցուած էր: Ինծի ըսին թէ այս քարը շատ արժէք ունի քան թէ տակաւ մը ալիւրը, սակայն հրը ես անօթի ըլլամ, այս քարը զիս չի կրնար կշտացնել: Նոյնպէս իմ հոգիս ուրիշ բանով չկրնար կշտանալ, բայց միայն Յիսուսով, Ան է իմ կեանքիս հացը»:

«Ուրիշ անգամ մը երբ քերականութեան դասի մէջ էր, երկինք բառը վերլուծած ատեն

ըսաւ թէ այս բառը յատուկ անուն մը ըլլալու է, ինչու որ մէկ երկինք մը կայ: Դժուար խնդրի մը լուծման ատեն, յաճախ կը լսէի որ ցած ձայնով կը մըմնջէր՝ «Աստուած իմ, օգնէ ինծի»:

«Շատեր իրեն կը գրէին որ իր նկարը զրկէ իրենց. ես ինքս շատ աշխատեցայ զինք նկարել. «Իմ նկարս այնքա՛ն տգեղ է ըսաւ ինձ, ո՛հ թէ կրնայի անոնց Յիսուսի նկարը զրկել»:

«Օրուան մէջ յաճախ կը կրկնէր. «Իմ Հայրս ինծի ըսաւ այսպէս ընել, կամ իմ Հայրս ըսաւ այնպէս ընել»: Երբ ուսուցիչներէն հրաման մը կ'առնէր, անպայման ճշդիւ պիտի կատարէր ամէն պարագայի տակ:

Իր նայուածքը այնքան համարձակ, իր դէմքը այնքան համակրելի, իր սիրտը այնքան անկեղծ և մաքուր էր որ, իր բոլոր անձովը ամբողջ օրհնութիւն մը ըլլալով՝ խիստ հաճելի էր բոլոր իրմով հետաքրքրուողներուն. և սակայն դժբախտաբար օգը չը նպաստեց խեղճ երիտասարդին առողջութեան:

Սամուէլ, 1893 Յունուար ամսոյն խիստ ծանր պաղաճութեամբ մը հիւանդացաւ և հակառակ մեր բոլոր խնամքներուն, չկրցաւ իր առողջութիւնը գտնել. թէպէտեւ մենք կը յուսայինք որ պիտի առողջանար, բայց ինք կը զգար թէ «Իր Տէրը զինք կը կանչէր»: Մենք կը խօսէինք իրեն Ափրիկէի այն զարմանալի գործին վրայ, որու մասին իր սիրտը ջերմապէս կը բորբոքէր: Սակայն ինք կը պատասխանէր թէ «Ուրիշներ աւելի լաւ պիտի կատարէին այս պատուական գործը քան ինք: Այս գործը իմս չէ, հապա Տէր Յիսուսինն է. Անիկա պիտի ընտրէ իր գործաւորները»: Իր հիւանդութիւնը զմեզ զարմացնող ուրախութեամբ և մեծ ու սքանչելի համբերութեամբ մը անցուց. բնաւ չէր խօսեր իր ցաւերուն վրայ: Իրեն համար գիշերները երբեք երկար չէին, ոչ ալ ջերմը զօրաւոր կը զգար. անիկա իր շրթունքներուն վրայ միայն շնորհակալութեան բառեր ունէր իր Փրկչին հանդէպ, «Որ իր քովն էր»:

Անգամ մը հարցուցի իրեն թէ՛ մահէն չէ՞ր վախնար. «Ո՛հ, Պարոն Րիտ, ըսաւ ինծի, Յիսուսը գտնելէս ի վեր մահը իմ լաւագոյն բարեկամս է»:

Եւ ահա այս վկայութեամբ, Մայիսի առաւօտ մը Սամուէլ Մորիս քնացաւ Տէրոջմով, Տէրոջը համար: Անոր համար կ'ըսենք «Սամուէլ Աստուծոյ հետ քալեց, և չէր գտնուեր, ինչու որ Աստուած առաւ զանիկա»: Այսպէս վերջացաւ այս խոնարհ, բայց այնքան նշանակելի անձնաւորութիւնը:

Անոր սուգը հազարաւոր սրտեր շարժեց: Անոր զազադին առջեւ մենք ցաւ ի սիրտ կը հարցնենք, «Ինչո՞ւ համար այսպէս Տէրը իրեն կանչեց ծառայ մը, որ տակաւին հոս, աշխարհի վրայ գործ ունէր կատարելիք: Սակայն կը խոնարհինք Անոր խորհրդաւոր գաղտնիքներուն առջեւ, գիտնալով որ «Անոր խորհուրդները մեր խորհուրդները չեն և Անոր ճամբաները մեր ճամբաները չեն»:

Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարեց Պէրրի փողոցին եկեղեցւոյն հովիւը, այն համայնքին մէջ, որուն կը պատկանէր Սամուէլ:

Տաճարը խուռն բազմութեամբ մը լեցուած էր և շատեր ալ տեղ չըլլալուն համար դուրսը կեցած էին: Շատեր կուլային և կուրծքերուն տակ կը հեծկտային, թէպէտ թաղուողը խեղճ սեւամորթ մըն էր: Այո՛, թէպէտ սեւամորթ մըն էր, բայց ճերմակամորթ քրիստոնեայէ մը աւելի պատուական և ճշմարտապէս սքանչելի հաւատքի դաս մը տուաւ, իր կատարեալ նուիրումովը, զօրութեամբ և Աստուծոյ հանդէպ ունեցած հաւատարիմ ծառայութեամբը:

Անիկա թաղուեցաւ «Փօր Վայրը» անունով ընդարձակ գերեզմանոցին մէջ. գեղեցիկ քար մը գետեղուեցաւ իր գերեզմանին վրայ, որ գրեթէ ուխտատեղի մը դարձաւ, իր բազմաթիւ այցելուներուն պատճառաւ: Շատեր ալ կուգային հոն լալու համար և ինչո՞ւ գիտէ՞ք: Որովհետեւ Սուրբ Հոգին իր զգալի ներկայութեամբը բնակեցաւ այս պզտիկ սեւամորթին մէջը:

Երբ այս տողերը կը գրեմ, կ'ուզեմ՝ վկայել երկու միջադէպեր Սամուէլի կեանքէն, որոնք հիմա յիշողութեանս կուգան: Երբ անիկա մեր զպրոցը մտաւ, կանչեցի զայն իմ զրասենեակս և իրեն հարցուցի թէ «Ե՞րբ սենեակը կը փափաքէր ունենալ»: — «Ո՛հ, Պարոն Րիտ, ըսաւ ան, հոգ չէ, որը կ'ըլլայ թող ըլլայ և եթէ կայ սենեակ մը, որ ունէ մէկը չուզեր, զայն տուէք ինծի»: Արցունքներս չկրցայ զսպել: Ես ինքնիւրենս հարցուցի թէ՛ արդեօք ես ինքս ալ պատրաստ էի այսպէս խոնարհաբար առնել զայն, որ ուրիշները պիտի մերժէին: Դպրոցի տնօրէն ըլլալէս ասդին, հազարաւոր աշակերտներու սենեակներ կարգադրած եմ, բայց ունէ մէկը չըսաւ ինծի թէ «Եթէ կայ սենեակ մը որ ունէ մէկը չուզեր, զայն տուէք ինծի»: Միւս միջադէպը շատ աւելի նշանակալից է, որ կը ցուցնէ թէ հոգիներու փրկութեան որքան նոնշացող մըն էր Մօրիս:

Օր մը այս պատուական պատանին նկաւ

գրասենյակս և ըսաւ թէ՝ «Կ'ուզեմ՝ յետ այսու ձգել ղպրոցը և երթալ աշխատիլ»։ — «Ինչո՞ւ, ըսի իրեն գոհ, չե՞ս մեղմէ»։ — Ո՛հ, ոչ, խիստ գոհ եմ ձեզմէ, ապահով եղէք, Պարոն Րիտ, ըսաւ, ես կը փափաքիմ զրամ վաստկիլ որ իմ բարեկամս Հանրի Օնիէլը հոս այս երկիրը բերեմ»։

«Ո՞վ է այս Հանրի Օնիէլը» ըսի իրեն»։

«Տէրոջմով իմ եղբայրս է, ես գինքը Յիսուսի առաջնորդած եմ, քաջ պատանի մըն է և ինձմէ լաւ է. հաւատարմաբար Աստուծոյ հետ կը քալէ, պէտք է որ անիկա այս երկիրը գայ ուսանելու համար»։

— Շատ լաւ Սամուէլ, եթէ պէտք է որ քու բարեկամդ Ամերիկա գայ, Տէրը պիտի կարգադրէ ամէն բան «նոսէ քու Հօրդ»։ Գրեթէ անմիջապէս քաշուեցաւ իր սենեակը աղօթելու համար։ Նոյն իրիկունը ես գրեցի միսիոնար Պր. Տաքի, որ իր ազնիւ Տիկնոջ հետ կը գործէ հարաւ-արեւմտեան Ափրիկէի մէջ, այն շրջանին մէջ ուր կը բնակէր վերոյիշեալ Ափրիկէցի պատանին՝ Հանրի Օնիէլը։

Հետեւեալ օրը Սամուէլը եկաւ քովս լուսաւորուած դէմքով և ըսաւ ինծի թէ «Հայրս ինծի գիտցուց որ Հանրին պիտի գայ այս երկիրը»։

Մի քանի օր յետոյ նամակ մը ընդունեցի Պարոն Տաքէն, որ կը ծանուցանէր թէ ամէն կարգադրութիւն տեսնուած է և Հանրին մօտ օրէն պիտի մեկնի մեզի գալու։

Վերջապէս քիչ յետոյ եկաւ անիկա և մօտաւորապէս տարի ու կէս մեզի հետ կենալէ վերջ, վերադարձաւ Ափրիկէ իբրեւ միսիոնար։ Հանրի իր ծառայութեամբը Սամուէլ Մօրիսի հաւատքին առաջին պտուղներէն մէկն է։

Իրիկուն մը Սամուէլ խնդալով ինծի ըսաւ, Մր. Րիտ «Հոս այնքան կը սիրեմ զՁեզ, Ստեֆըն Մէրթթը, Պարոն Հիւստը և բոլոր իմ ուսուցիչներս, որ չեմ գիտեր թէ արդեօք երկինքի մէջ գձեզ ասկէ աւելի պիտի կրնամ սիրել։ Թէեւ ուրիշ խնդիր է թէ հոն ես աւելի շուտ պիտի սորվիմ և այսքան ճշշուող հոգի մը պիտի չունենամ, ոչ ալ այսքան ծանրախօս լեզու մը»։

Ո՛հ, երանելի Սամուէլ, դուն սորվեցար դասեր, որոնք քու ուսուցիչներդ չեն գիտեր տալուին, դուն տեսար «Թագաւորը իր փառաւոր մեծ վայելչութեամբը»։ Դուն խմեցիր «Կենաց ջուրի գետէն» ակնվանի պէս պայծառ, որ կ'ելլէ Աստուծոյ ու Գառնուկին Աթոռէն»։ Ամէն։

(ՎԵՐՋ)

Թրգմ. Յրանսերէնէ

Գ. ՊԱՐՍՍԱՄԵԱՆ



ՄԱՆԿԱՆՑ

ՎԱԳԱՆՁԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

4 Յուլիս 1938

Սիրելի ուսուցիչս,

Կը շարունակենք ուրախանալ այս վազանձի տեղին մէջ և յաճախ կը խորհինք Ձեր մասին։ Ամէն օր պտոյտի կ'երթանք վարժուհիին հետ ըլլալ լեռները, կամ ձորերը։ Կէսօրները կը հանգչինք. այդ առթիւ կը կարդանք «Պուրկտօրֆի երիցատան յաղթանակը»։ Շատ գեղեցիկ է այդ գիրքը. Ս. լացաւ և կ'ըսէ թէ պէտք է Մարգրիտին նմանինք։ Ամէն անգամ որ պատուհանները կը բանանք և կը դիտենք լեռները, կ'ըսենք «Աստուծոյ խօսքը յաւիտեան կը մնայ»։

Ս.ին քով ուրիշ հայ աղջիկներ ալ կան, որոնք մեր վրայ կը խնդան, քանզի չեն հաւատար, բայց կայ աղջիկ մը, որ ամէն երեկոյ իր աղօթքը կ'ընէ և Նոր Կտակարանէն կը կարդայ. Ս. տուած է իրեն։ Այդ աղջիկը ըսած է թէ երբ որ տուն վերադառնամ, Նոր Կտակարանը հայրիկիս պիտի տամ որ կարդայ և ինք ալ հաւատայ Յիսուսի։ Ամէն առաւօտ Սուրբ Գիրքէն կը կարդանք։ Այս առաւօտ երբ Ս. կը կարդար Սուրբ Գիրքը, վարժուհին (Ֆրանսացի) քովէն անցնելու ատեն ըսաւ, «Այդ գիրքը օր մը քեզ պիտի խենթեցնէ Ս.»։

Ալ կը վերջացնեմ իմ նամակս ձեզի շատ բարեւներ ղրկելով։

ՄԱՐԹԱ

(Յով. Ժ. 24, 23, 27)

Սէն-Լուի, 9 Յուլիս 1938

Սիրելի աշակերտս Մ...,

Նամակդ աղուոր էր, շատ աղուոր։ Բարի տողերդ գիտ ուրախացուցին, շնորհակալ եմ։ Ապրիլս։ Միայն թէ սիրելի Մ. ամբողջ գրածդ Ս.ին շուրջ էր։ անձնամոռացութիւնդ գեղեցիկ է, շատ գեղեցիկ։ Բայց կը փափաքէի վերջապէս լսել

(Շարունակութիւնը տես՝ կողքին 4րդ էջը)

ԿԸ ՊԱՏԿԱՆԻՄ ՓՐԿԶԻՆ

(Գերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.)

Մ. Ամբողջ ու ժող սրբոց հոգւով Կը պատկանիմ քրկչին Կրկ. Կը պատկանիմ
Բ. Կառավարութիւն քեզ իր մով

Փրկ լի Կը պատկանիմ քրկչին Կը քաջ Կը շիւք քրկչին յոյժ աւ ին ճիւ -

- 1 Ամբողջ ու ժող, սրբոց հոգւով
Կը պատկանիմ քրկչին,
Կ'առավարութիւն Կ'ուզեմ իր մով:
Կը պատկանիմ քրկչին,
(Կրկ.) Կը պատկանիմ քրկչին,
Ու ինք աւ ինձի:
- 2 Փորձութիւններ երբ զիս պատեն,
Ճընշող հոգեր երբոր շատ են: (Կրկ.)
- 3 Զուր տեղ աշխարհ զիս հրապուրէ,
Անգոր հոգիս ապահով է: (Կրկ.)
- 4 Վըտանգներ երբ ինձ ըսպառնան,
Այսօր, վաղը եւ յաւիտեան: (Կրկ.)



Փետրուարի թիւին մէջ խնդրած էինք մեր սիրելի «Բանբեր»-ի ընտանիքէն ջանք մը աւելի ընել, որպէս զի այս տարի 200 օրինակ աւելի տպուած «Բանբեր»ները տեղաւորուին: Շնորհակալ ենք անոնցմէ, որոնք այս մասին մեզի աջակից եղան: Դեռ 70 նոր քաժանորդներու պէտք ունինք: Որո՞նք Կ'ուզեն աջակցիլ մեզի: Կանխաւ շնորհակալութիւն:

Յ. Ն. Ղ.



քու շուրջդ ալ: Կ'ուզէի գիտնալ թէ դուն ալ Ս.ին պէս բոլոր սրտով Տէր Յիսուսը ընդունած ես: Անոր պէս կրնա՞ս վկայել թէ Աստուծոյ որդի ես: Վստահութիւն ունի՞ս թէ «Յիսուս Քրիստոսի արիւնը քեզ ամէն մեղքէ սրբած է» (Ա. Յով. Ա. 7): Ունի՞ս այն խաղաղութիւնը սրտիդ մէջ զոր Ս. ունի, նաեւ քոյրդ Ե.ը և ուրիշ ընկերներ, որոնք ցնծութեամբ կը վկայեն: Հինգշաբթի իրիկունները Դանիէլի գիրքը սերտեցինք: Դանիէլ՝ առեւծներու գութին մէջ և իր երեք ընկերները եօթնապատիկ բոլորեալ կրակի հնոցին մէջ նոյն խաղաղութիւնը կը վկայէին, չէ՞ Ո՛հ, «Աստուծոյ խաղաղութիւնը» կը կոչուի այդ Փիւ. Դ. 7, զոր Յիսուս կուտայ միայն իրեններուն Յով. Ժ. 27: Ամէն միտքէ վեր եղող այս խաղաղութիւնը այնպիսի օրհնութիւն մըն է որ միայն դայն ունեցողը կրնայ անոր անպատմելի քաղցրութիւնը գնահատել: Հիմա բաց և կարդա՛ 327րդ երգին համարները ետեւ ետեւի: Կրնա՞ս երգել: Ո՛հ, առանց Յիսուսի անկարելի է, անկարելի՛...

Կը գրես թէ Ս. Տէր Յիսուսի մահուան և սիրոյն վրայ կը խօսի ձեզի հետ եղող հայ ընկերներուն: Ո՛հ, ինչ ցնծալի լուր է այս լսել որ աշակերտներէս մին, ոչ միայն ինք փրկուած է, այլ ուրիշներ ալ Փրկչին առաջնորդելու կ'աշխատի: Տէրը օրհնէ զինք: Դրած էիր նաեւ թէ ոմանք ձեր վրայ կը խնդան ու կը ծաղրեն ձեզ, բայց հայ աղջիկ մը հաւատալով ապաշխարած է, և ձեզի Աստուծոյ խօսքը կը կարդայ ու կ'աղօթէ: Փառք Յիսուս Փրկչին այդ սիրելի հոգիին դարձին համար. Դուկ. ԺԵ 10: Ձեր անապաշխար ընկերներուն խնդուքին ու ծաղրին համար չէք տրտմիր անշուշտ: Մեղմէ առաջ եկող մարգարէներէն, առաքեալներէն, նախապիւններէն ո՞ր մէկը չհալածեցին, չծաղրեցին, չծեծեցին: Յիշեցէք մեր Փրկչին փշեղէն պսակը, ծիրանի հագուստները, և իր Սուրբ երեսին տեղացող ապտակներն ու թուքը: Ոչ միայն մի տրտմիք այլ ցնծացէք համաձայն Գործ. Ե 41 և Մատթ. Ե 10-12: Բայց, սիրելի Մ. շատ պիտի ուրախանայի եթէ այդ աղջկան ապաշխարութեան հետ քու ապաշխարութեանդ լուրն ալ առնէի: Այն ատեն ինչպէս երկինքի մէջ՝ նոյնպէս մեր եկեղեցիին մէջ, ձեր տանը մէջ, քու և իմ սրտիս մէջ մեծ մեծ ուրախութիւն պիտի ծագեր: Կ'ակնկալեմ որ դուն սրտանց Փրկիչը ընդունիս և փրկուած ու փոխուած տուն դառնաս, Դուկ. ԺԵ 32: Ս.ին գրած նամակս միասին կարդացէք: Միասին

առանձնացէք նաեւ Սուրբ Գիրք սերտելու եւ աղօթելու համար:

Քեզ անկեղծութեամբ սիրող և քու փրկութեանդ համար աղօթող ուսուցիչդ՝

Ս. ՊԱԳԱՆԵԱՆ



ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ




ՅԻՐԱՆՍԱ.— Մինչ այս թիւը տպարան կը ղրկուի. Լիոնի մէջ տեղի կ'ունենայ Ֆրանսահայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան ժողովը: Այս ժողովին հրաւիրուած են խօսելու կարեւոր անձնաւորութիւններ, ի մէջ այլոց Սիւփէրինթէնդէնթ, Մր. ԵՕՀԱՆՆԷՍ ԷՀՄԱՆ, նախկին գերման միախոնար և Խարբերդ Մեղրէի բոլոր գերման որբանոցներու և դպրոցներու տնօրէն:

“ԲԱՆԲԵՐ”Ի

1939Ի

ՕՐԱՅՈՅՑԸ



Հայ ընտանիքի օրացոյցը, որ «Բանբեր» ընթերցողներուն արդէն ծանօթ է, շրջաբերութեան մէջ կը գտնուի եւ կազմ ու պատրաստ է ղրկուելու բոլոր փափաքողներուն:

Անցիալ տարի նորէն ուշ ապսպրողներ եղան եւ չկրցան ընդունիլ զայն, քանի որ սպառած էր Այս տարի ալ նոյն թուով հրատարակուած է Շուտ ապսպրեցէք, որ առանց օրացոյցի չմնաք:

Ֆրանսա եւ Սուրիա 7.50 ֆր.

Արտասահման 40 սէնթ

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille